



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ԶԴՅՈՒՄ

ՊՐԵՍԵՐՎ ՀՐԱՄԱԳՎԱԼՈՒՄ
ԸՐԾԱՀ 1928








ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

19923 A 8630

ԶՂՋՈՒՄ



Պետական Հրատարակություն. - Ենթվաճ. 1928

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

№ 779

Գրառելված 794

Տիրաժ 2000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

Համես պատմվածքներիս առաջին անգամ
առանձին գրքույկով տպագրվելը զուգաղի-
պում է Բանթակ ավարտելուս։ Բաժանվում
եմ իմ սիրած ու գուրգուրած Բանթակից։
Բանթակում՝ հասարակական աշխատան-
ի ծփծփան այդ լիակում անմոռանալի
քաղցր որեր եմ ապրել։ Յերբե՛ք, յերբե՛ք
չեմ մոռանա Բանթակը։ Հույս ունեմ,
զոր հետազայում կխոսեմ այդ քաղցր
որերի մասին։ Զնայած այս ժողովածուի
մեջ զետեղված պատմվածքներից յեվ վոչ
մեկը չե վերցրած Բանթակի գրավիչ
կյանքից, սակայն ինձ գրելու հույս ու
յեռանդ ներենչողները յեղել են չորս հա-
րյուր բանվոր-ուսանող ընկերներս ու
մեծ հարգանիք արժանի ուսուցիչներս։
Գրքույկս նվիրում եմ Յերեվանի Բան-
թակի ուսուցիչ յեվ ուսանող ընկերներիս։

ՀԵՂԻՆԱԿ

Առքան նկատու ու ամսորինը առնալ
- իսպար գրիքը որ խրիստով օքիլուն
հանելու նշան առ առ ոքր բանակ է ի նկար
առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

ԶՂԶՈՒՄ.

I

Այն դժբախտությունը, վոր ինձ պատահեց, թող ձեր թշնամուն անգամ չպատահի: Այս, այն դժբախտությունը: Սիրտս միքիչ թեթևացնելու համար ուզում եմ գլխիս լեկած այդ սոսկալի փորձանքը ձեզ պատմել: Պատմեմ, թե սիրտս կթեթևանա, և թե դուք խրատ կառնեք, կզգուշանաք, վոր ծաղիկ հասակում սառնամանիքի չհանդիպեք: Յես ուզում եմ ձեզ զղջման խոռք առել:

Տեսնո՞ւմ եք, փափախս վոր վերցնում եմ, գլուխս կարծես թե մարտ ամսին ծաղկած մասրի թուփ լինի: Մի հատ, գոնե մի սև մազ չկա գըլ-խիս: Յերեկի դուք կարծում եք, թե հիսուն տարեկան կլինեմ, հա: Զա՞ն, չսխալվեք: Հավատացեք, լերդվում եմ, վոր լերեսուն հինգ տարիս դեռ քսանութ թվի հուլիսին ե բոլորելու: Դեռ լերիտասարդ եմ, չե:

Դժբախտություն եր: Դեռ լավ եր, վոր ուժիչ, ավելի զարհուրելի փորձանք, որինակ՝ մար-

դասպանություն չպատահեց: Դուք ժպառւմ եք,
վոր մարդասպանության մասին խոսում եմ: Հիմա
յերբ պատմեմ ու լսեք, նոր կհամոզվեք, վոր
խկապես մարդասպանությունը բոլորովին ան-
խուսափելի չի յեղել: Նույնիսկ կարող եր ինք-
նասպանության դեպք ել պատահել:

II

Ես բավական հարուստ ընտանիքում եմ
ծնվել: Յեթե խորհրդալին լեզվով խոսենք, կու-
լակի տղա յեմ: Լսմամ եք, կուլակի տղա:

Ձեր գլուխը չցավացնելու համար մանրա-
մասնությունների վրա կանգ չեմ առնի, կարճ
ու պարզ կխոսեմ: Զանազան դժբախսություն-
ներ մեկը մյուսին հաջորդելով՝ կուլակ հորս տըն-
տեսությունը քամեցին, տարան: Հայրս 18 թվին
մեռավ: Մնացինք յես ու պառավ մայրս: 20 թվին,
յերբ մեր դավառը խորհրդայնացավ, տնտեսու-
թյունս միջակից ել ցածր եր: Քաղաքական կյան-
քով բոլորովին չելի հետաքրքրվել ու չելի հետա-
քրքրվում: Այսպես վոր ձախազուրկ չելի: Յես
ու մայրս մեկուսացած ու մռայլ կյանք ելինք
վարում՝ յենթարկված տխուր հիշողությունների
կամքին: Գյուղում վոչինչ, վոչինչ ինձ չեր հե-
տաքրքրում:

Մայրս զգում եք, վոր շուտով պետք ե մեռ-

Նի: Միշտ, ամեն որ նա մեռնելու մասին եր
խոսում:

Մի որ, իրիկնաղեմին, հանդից յերբ տուն
դարձա, մայրս շատ տխուր ու խեղճացած ինձ
դիմավորեց: Յես նրան յերբեք այդքան ճնշված
չելի տեսել: Աչքերը խորն ընկած ելին՝ անկրակ,
անհրապուզ, շրթունքները կապտոտած, յերեսի
մոխրաղուն մորթին ծալ-ծալ կուչ եր յեկել,
տգեղացել: Նկատեցի, վոր մայրս շատ ե լաց
յեղել:

— Չոքան ջան,—գլուխս գրկելով ասեց մայ-
րըս,—մեռնում եմ. բալաս, մորդ ուրախացրու,
դու յել ուրախացիր. արի՛ քեզ համար մի հարս
բերենք, բալաս, սիրտս հարսանիք ա ուզում:

Մայրս լավ բան ե ասում, մտածեցի, ա-
մուսնանալուս ժամանակն անցնում ե, քսանլոթ
տարիս բոլորել ե: Իսկապես, հարկավոր ե մի
աղջիկ գտնել: Յեվ ամուսնալու բուռն մի ցան-
կություն սիրտս պատեց:

Զահել, արյունս տաք, առողջ, աշխատումակ
մի տղամարդ, կարսղ եր պատահել, վոր մորս
առաջարկը չգրգռեր ինձ: Վո՞չ: Հավատում եք,
թե չե, մարմնի դողոց զգացի, կարմրատակեցի:
Մորս առաջարկը բոլոր տխուր հիշողություններս
ու մտքերս սելավի պես քշեց-տարավ:

— Աղեք, դե վոր սիրտ ուզում ե, դեմ չեմ,—
պատասխանեցի:

Մալրս ճակատս պաշեց ու թաց աչքերը թշե-
րիս քսելով՝ լացակումած ասեց.

— Հորդ խաբար կտանեմ, կտան տղիդ
անսպ եմ արել, նոր յեկել. մի թառլան հարս
ունես:

Իմ աչքերն ել թրջվեցին, կոկորդս նեղա-
ցավ...

Իրիկնադեմին մորս հետ պայմանավորվեցի
և մտքերի բեռը շալակած՝ տնից դուրս յեկա:

Ո՞վ պետք ե կինս դառնա, ո՞ւմ պետք ե
սիրեմ...

III

Գյուղի հարուստ աղջկատեր տներից առա-
ջարկություններ յեղան, լոթ թե ութ աղջիկ ցուց
տվին, բայց վոչ մեկին չհավանեցի: Գյուղացի
յերիտասարդ տղան ասում ե՝ կինս թեկուզ քոռ,
կադ, չոփուռ լինի, միան թե հարստի փեսա
դառնամ: Սակայն յես այդպես չվարվեցի: Հարըս-
տության բոլորովին աչք չունեցի: Իմ ցանկու-
թյունն եր միայն՝ սիրուն ու սրտով աղջիկ ու-
զել: Հարստությունը կար, ուր գնաց. ելի կդա
ու կանցնի:

Մալրս համաձայնվեց, վոր ընտրությունն
ինքս կատարեմ:

Սիրտս առվակի վրա կռացած ուռենու

տերնի պես դողում եր։ Ում պետք եւ սիրեմ…

Գիտեք, ալգալիսի դեպքերում համբերելը դժվար է. մարդ այնքան եւ մտածում, վոր սիրութեած արևի տակ ընկած լուղի պես հալչում է։ Զեզանից յերևի շատերն ալդ կլանքով ապրում են, կզգան։

Անուշ, շատ անուշ են լինում յերիտասարդ մարդու նախշուն ալդ որերը։ Յեվ անուշ ապրումների ալդ որերին շատ պատահական կերպով սրտիս փնտուածին հանդիպեցի։

Նոր եր լուսացել. ձին տարել եմ գյուղի միջով անցնող գետը, լողացրել, ջրել ու դառնում եմ։ Աղբյուրի ճամպին հանդիպեցի հասած, մոտ տասնութ տարեկան մի ժիր աղջկա։ Նա հետո կողք-կողքի, կուժն ուսին աղբյուրից տուն եր դառնում։ Աչքիս տակով սկսեցի նրան մի լավ նայել։ Զեմ ճանաչում, բայց դուրս յեկավ։ Պատառոտած շորերով մի աղջիկ եր նա, բավականին բարձր հասակով, յերկու ջուխտ յերկար ու փարթամ ծամեր թիկունքովը կախած, ուրախ թուխտ աչքերով գարնանը նոր բացված վարդի մուգ գույնի դուրեկան դեմքով։ Միրտս կպակ ու պոկ չեկավ։

— Ում աղջիկն ես,—վախենալով հարցը, յերբ բաժանվում ելինք։

Աղջիկը յերեսը շուռ տալով՝ պատամխանեց։

Հորը ճանաչում եմ:

— Անունդ ի՞նչ ե,— մի նոր հարց տվի:

— Անունս... անունս... Ամլիկ ա.— շփոթված պատասխանեց նա և լեղնիկի պես փախավ։ Փախավ ու սիրտս հետը տարավ։

Մեր գյուղի վերջին աղքատի աղջիկն եր, վոր ուշքս տարավ։ Առաջին հանդիպումից զգացի, վոր Ամլիկը կանքի լավ ընկեր կլինի։

Սիրտս բռնել ե, պետք ե առնեմ, ով կարող ե ինձ խանգարել։

Մայրս լերկար համառեց, բայց վերջապես համաձայնեց ու գնաց խնամախոսության։

Յերբ պետք ե գա մեր տունը, յերբ պետք ե թշող սրտիս հով տամ... Ամլիկը... թուխածամ իմ հարսնացուն...։

Մտածում եմ ու սրտատրով սպասում հարսանիքին։

Բարեկամներիցս միքանիսը լեկան, նախատեցին, վոր հիմարությունից ձեռք քաշեմ, վոր լես պատվավոր մարդու, մեծ ոջախի տղա լեմ, ամոթ ե, վոր մի սոված մարդու հետ եմ բարեկամանում։ Զեր արևը վկա, դրանց մի լավ հայնուեցի ու ճամպու դրի։

Հարսանիքիս հարուստ բարեկամներիցս շատերը չեկան։ Նեղացել ելին։ Կարծում ելին, թե

դարդ կանեմ: Խեղճ մարդիկ: Ո՞վ եր նրանց մաւսին մտածողը: Ուշքս ու միտքս Ամլիկս եր:

Հոտաղ Կարոյի պատառոտված շորերով, վոտաբորիկ աղջիկը մեր տուն բերելուս պես մի փերի դարձավ:

Նոր ու նախշուն շորերը հագին, լավ ուտում-խմում եր, ուրախանում, չինարի պես փարթամանում: Իմ արևս եմ ասում, գյուղում ել մարդ չկար, վոր ինձ չնախանձեր: Այնքան ել սիրուն, այնքան ել համով ու հոտով կի՞ն:

Ամլիկն ինձ համար վոչ թե կին եր, այլ սարի պես թիկունքումս կանգնած, աժդահա մի յեղբայր: Հոր տանը նա վարժվել եր ամեն տեսակ դաշտալին աշխատանքի և ինձ մենակ չեր թողնում: Վորքան խնդրում ելի, նույնիսկ նեղանում, բարկանում, վոր միայն տնալին գործերով զբաղվի, չեր համաձայնվում: Մանգաղը ձեռքին՝ յերբ կողքովս մտնում եր արտը, հասած ցողունները խշխացնելով հնձում, սիրտս բարձրանում եր, մեծանում: Ու սերս դեպի Ամլիկը խորանում եր, ծովի չափ խորանում:

Մայրս մեռավ: Մորս տարանք, հորս կողքին թաղեցինք ու մացինք յերկուսով, յես ու սրտիս կտոր իմ Ամլիկը:

IV

Հինգ տարին յերազի նման թռավ, գնաց: Վեց տարի յե, ինչ գյուղը խորհրդալին եւ:

Հավատում եք թե չե, ամաչում եմ, վոր խոսեմ.
գիտեմ, ինձ կնախատեք, և տեղին կլինի:

Ինչ ե կատարվել գյուղում այդ վեց տարվա
ընթացքում՝ վոչինչ չգիտեմ:

Ինչպես սկզբում ասեցի, յես յերբեք ձայ-
նազուրկ չեմ յեղել, թեկուզ ուազմական կոմմու-
նիզմի են խիստ որերին. Միջակ տնտեսատեր
եմ, իմ քրախնքով ապրող: Բայց մի չար սատա-
նա գլուխս մտած անբողջ վեց տարի հեռու,
գյուղի հասարակական կյանքից ինձ հեռու յեր
պահում: Յերդվում եմ արեւպս, վոր ամաչում
եմ իմ արարմունքից:

Հինգ տարին Ամիկիս հետ այնպես հեշտ ու
ուրախ անցկացրինք, վոր կարծես թե՛ մի կա-
թիլ ջուր եր, խմեցինք, անցավ. Շատ սիրով ելինք
ապրում: Յերկուսս ել սրտով սիրում ելինք ի-
րար: Իսկ յեթե տղամարդու և կնոջ միջև սեղը
փոխադարձ ե, վոչ մի բախտավորություն նրան
չի հասնիր: Մեր ամուսնության հինգերորդ տա-
րում արդեն յերկու յերեխա ունելինք:

Յերկու սիրուն ու թովոուն տղա:

Վորքան քաղցը ե, յերբ մարդ յերեխաներ ե
ունենում ու սիրում ե դրանց. Դրանից անուշ
վոչինչ չկտ աշխարհում:

Առաջին տարիներում Ամիկիս գյուղի հասա-
րակական կյանքին չմասնակցելուս համար չեր

խոսում ու չեղել կարող խոսել (են ժամանակվա
իմ կարծիքով), Բայց վերջին տարին փոխվեց:
Յերեկոները, հենց վոր հանդից տռն ելի գալիս
ու հացի նատում, ակսում եր խոսել.

— Ա՛ մարդ, եսոր կոռապերատիվի ժողով կա:

— Ա՛ մարդ, եսոր տրակոտոր են բերել գյուղ:

— Ա՛ մարդ, վարկային ընկերության ան-
դամ զրվի:

— Ա՛ մարդ, ամոթ ա, խրճիթ-ընթերցարան
գնաւ:

— Ա՛ մարդ, գաղեթ դուրս գրի, կարդա:

Ասում եր և թագուն աչքի տակով նայում
եր դեմքիս արտահայտությանը:

— Ա՛ կնիկ, եդ բոլոր ասածներդ մեզ մի
կտոր հաց չեն տա, թող հանդիսաւ մեր տանը
նստենք, մեր ցավի մասին մտածենք. — պատաս-
խանում ելի յես և թագուն նայում նրան:

Ամլիկս նեղանում եր, հուզվում: Կարծեմ
սկզբում ատել եմ՝ յետ բավականին գրագետ ելիւ
Ամլիկիս համար այնքան եմ հեքիաթներ կարդա-
ցել: Վերջին որերը, չգիտեմ վորտեղից, նա նոր
գագեթներ եր բերում ու խնդրում, վոր կարդամ:
Միքանի առդ կարդամ ելիւ և գաղեթը շպրտում:
Շպրտում ելիւ և նայում: Ամլիկը հուզմունքից
ուղում եր լաց լինել:

Մի կասկած սիրոս ընկավ:

Կնոջս հետ մի գաղտնի գործողություն ե
կատարվում, լես չգիտեմ—մտածեցի:

Տեր աստված... հալալ հացս... հարամ...

Սև կասկածն սկսեց սիրտս կրծել:

Մաքումս վորոշեցի միքանի շաբաթ. կնոջս
հետապնդել: Հավատում եք, մինչև այդ վոչ մի
անդամ լես նրան չոռ չելի ասել: Կյանքիս պես
սիրել եմ, բնչպես չոռ ասելի:

Մոտ մի շաբաթ հետապնդեցի. բայց կաս-
կածներս ճշտելու փաստ չգտա: Հետեւելու այնու
կարիք չկար: Միրտս հանգստացավ: Յեվ հենց
վերջին որն եր, կիրակի յերեկոյան: Վարկալին
ընկերության նախագահ՝ Վահանի կինը (մարդ
ու կին յերկուան ել կոմմունիստ են) յեկավ մեր
տուն, շատ խորը մի հայացք, գցեց վրաս ու կնոջս
ականջի տակ փափսաց: Եղ փափսոցը շատ կաս-
կածելի թվաց ինձ:

— Ա՛ կնիկ, դնում եմ Հանես ապոր տունը
զրուցի, ուշ կգամ, ճրագը կհանգնես, — ասեցի
և դուրս յեկա:

Դուրս յեկա, տան գլխովը շուռ տվի ու
սկսեցի հարմար մի տեղից մեր դուռը դիտել:
Պատմում եմ, բայց կարմրելով. ամոթե, չե՞:

Միքիչ անց՝ մեկ ել տեսնեմ՝ յերկուսով տնից
դուրս յեկան ու ծլկեցին: Աչքերս մթնեցին: Սա
բնչ բան ե: Ուր դնացին...

Կամաց ու զգուշությամբ հետևեցի նրանց:

Գիտեմ, դուք կնախատեք ինձ, վոր ալղքան կասկածոտ եմ յեղել. իսկապես, հիմա յես ել եմ ամաչում: Բայց ինչ արած, այն ժամանակ ալղպես ելի: Մեղքը մեր պապական աղաթինն եւ: Պոռշներս կրծոտելով հետևում ելի նրանց: Գնացին ու մտան խրճիթ-ընթերցարան: Սիրտս ամենաարագ թափով թմփթմփում եր ու հեռում:

Մեծ զգուշությամբ մոտեցա խրճիթ-ընթերցարանի լուսամուտին ու ներս նայեցի. արյունն աչքերս պատեց:

Քսանի չափ ջահել հարսներ լերկու շարք նստած՝ գրքերն առաջները կարդում ելին. իսկ գլուղկոմբջիջի քարտուղարը սովորեցնում եր նրանց: Տեսա... ահա... ահա Ամլիկս, առաջին շարքում նստած, կոմբջիջի քարտուղարը նայում ե նրան ու ժպտում:

Ամլիկս գիր ե սովորում, ժողով ե գնում, ինչ իրավունքով, ով ե նրան թուլատրել. — Ես հարցերը տալիս եմ ինձ ու պատասխան չեմ գտնում:

Ո՞վ գիտի, գուցե սիրեկան ել ունի: Խալտառակ այս միտքն ուղեղումս մեխվեց:

Ուզեցի ներս մտնել, մազերիցը բռնել ու մինչև մեր տունը քաշ տալ. մեկ ել ինձ զսպեցի:

Հարկավոր ե զգուշ լինել, մրուս գաղտնիքներն
ել բանալ թելադրեց սիրտա:

Զիգարս խորովելով՝ խրճիթ-ընթերցարանի
դռնից հեռացաւ Ո՛, վորքան ծանր ու դաժան
վայրկաննեւ ելին անցնում:

V

— Յես քեզ չեմ ասել նրա համար, վոր
վախենում եցի չթողնես գնամ, իսկ իմ սիրտն
ուզում ա. — իմ այն հարցին, թե ինչու ժողովի
գնալիս ինձ չես ասում, պատասխանեց կինս:

— Քանի՞ տարի լե, վոր ժողով ես գնում:

— Մի տարուց շատ ա, — բոլորովին հան-
գիստ պատասխանեց նա:

Կարկտից առաջ, յերբ ամպերը յերկնքում
վորոտում են ու լեռ ու ժայռ դղրդացնում, մարդ
կարծում ե, թե յերկինքը փուլ ե գալիս, ականջը
փակում ե, վոր գոռոցը չսի: Կնոջս խոսքը թվաց
թե կարկտից առաջ դղրդացող ամպերի վորոտն
ե. ականջներս փակեցին, Բայց սի՞րտա, նո սիրտս
ել չե՞ր փակվին: Միրտս խոցված եր խորն ու
դառը:

— Չոքան, նամուսդ հողին հավասարվել ե,
կնիկդ եդ ի՞նչ ե անում, զե մեռի ելի, ապրում
ես ի՞նչ անես, — թվադ թե մեկն ինձ այսպես
նախատում եւ:

Վողջ մարմնովս դողում ելի: Առամերս
այնպես ելին չխկչխկում, վոր ձենից յես ինքս
վախենում ելի: Տունը գլխիս անիվի նման
պտտվում եր:

Հինգ տարվա ընթացքում, առաջին անգամ,
աչքերս մթնած ալդ ժամին ձեռք բարձրացրի
սրտիս սիրած Ամլիկի վրա:

Տղամարդը կնոջը իերբ խանդում ե, դա շատ
սիրելուց ե: Ուզում ելի կնոջս վողջ-վողջ ուտեր,
վոր նա վոչ մի տեղ չգնա, և վոչվոք նրա կող-
քին ժողովում չնստի:

Յերեք-չորս անգամ բռունցքով մեջքին հաս-
ցըրի: Ամլիկը ծպտուն անգամ չհանեց: Յեվ ալդ
որվանից տանս հալալ հացը հարամ դարձավ:

— Ինչ ուզում ես արա, ժողովի պետք ա
զնամ, յես պատգամավորուհի յեմ. — վճռական
կերպով ասեց կինս:

Յես ջղանանում ելի, կատաղում, մռնչում
ու պռոշներս կրծոտում: Միթե սա նամուս ե,
կինս գլխիս նստել ե, գնում ե ժողով, ուրիշ
տղամարդկանց հետ նստում, ծիծաղում, գուցե
կոմքըիջի քարտուղարի սիրեկանն ե. մտածում
ու գլխիս մազերը պոկում ելի:

— Ամլիկ, քանի գլուխս վրաս ե, դու պետք
ե ժողովի չգնաս—ասում ելի ու բռունցքով ժե-
ծում..., հայնոյում... տանջում:



Զորս ամիս ալսպես շարունակվելուց հետո
մի որ կանչեցին ինձ գյուղխորհուրդ: Ամլիկը գան-
գատվել եր ու պահանջում եր, վոր բաժանվենք: ՏՏ. 884
Լսում եք, ապահարզան: Նա յեր ապահարզանի
հրավերը տալիս: Իսկ գյուղում կատարյալ խայ-
տառակություն ե, յերբ կինն ե տղամարդուն
թողնում: Ուրեմն այսքան աննամնւս եմ յեղել
յես: Կինս այնքան ե կատաղել, վոր իր կամքով
բաժանվել ե ցանկանում: Հենց ալդաեղ, գյուղ-
խորհրդի գրասենյակում ուզեցի բոնեմ ու խեղ-
դեմ, բայց չթողեցին, ասեցին՝ որենք կա:

— Ուր ուզում ե թող գնա. — դուրս թռավ
մխացող սրտիցս: Մենք բաժանվեցինք: Նա գնաց
հոր մոտ: Ամլիկի հայրը գյուղփոկի նախազահ եր
ընտրվել, գյուղական ակտիվ եր:

Տեղն ե յեկել, ուզում եմ մի յերկու խոսք
ասել Ամլիկի հոր մասին:

Ինչպես սկզբում պատմեցի, նա մեր գյուղի
հասարակական հոտաղն եր:

Եհ, ով եր նրան մարդկանց շարքում դա-
սողը. միայն յերբեմն ձեռ առնելու համար նրա-
նով զբաղվող եր լինում: Բարձրահասակ, թի-
կունքը լեն, մեծ յերկար գլխով մի հսկա տղա-
մարդ եր հոտաղ կարոն: Հեռվից նախողին թվում

Եր, թե մի հսկա լե և բոլին ու կազմվածքին
համեմատ խելք ու կարողություն ունի:

Մենք վոր բարեկամացանք, այդ մարդն իմ
ուշադրությունը գրավեց: Ասել եմ, չե՞, մենք բա-
րեկամացանք խորհրդայնացումից հետո: Հոտաղ
կարոն հենց վոր յերեկոները հանդից տուն եր գա-
լիս, դեռ հաց չկերած՝ դպրոց հաճախող վորդուն
հրամայում եր, վոր գնա մոտը նստի ու գիր սո-
վորեցնի: Քառասուն տարեկան հոտաղը գիր եր
սովորում. ծիծաղ ե, չե: Այնքան ելի ծիծաղում,
յերբեմն նա սաստիկ նեղանում եր ինձ վրա,
բայց շուտ ել հաշտվում եր: Կինը պատմում եր,
վոր յերեկոները անից դուրս ե գալիս ու միայն
լուսաբացին տուն դառնում:

— Կարդում եմ.— Կարոն կարճ պատասխա-
նում ե կնոջը, յերբ վերջինս հարցնում ե, թե
վհրտեղ ե յեղել նա:

Ամուսնությանս յերրորդ տարումն եր, վոր
լուր բերին, թե հոտաղ աներդ կոմմունիստ ե
գրվել: Մի կուշտ ծիծաղեցի: Անխելք մարդ, ինչ
գործ ունես կոմմունիստների շարքում:

Բայց այդ մարդը փոխվեց թե սրտով, թե
գլխով, թե զբաղմունքով: Հոտաղությանը մնաս
բարով ասեց ու մտավ կյանքի նոր շրջանը.
զբաղվում եր միայն իր տնտեսությամբ: Նա դարձել

Եր գյուղակտիվ ու ղեկավարում եր ինձ նման
մարդկանց:

Հոտաղ կարոն իմ ու կնոջս գործին համարլա
թե շխառնվեց. բաժանման որը գյուղխորհրդում
նա միայն ասեց.

— Աղջիկս դրա հետ ապրողը չի, տանում
եմ իմ տուն:

VII

Մյուս որը խալտառակ լուրը տարածվեց
ամբողջ գյուղում: Փափախն աչքերս ընկավ: Ա-
մաշում ելի մարդու լերեսի նալել, Յերբեմն վո-
րոշում ելի գնալ՝ Ամլիկին գտնել, վորտեղ ել
լինի, տեղն ու տեղը մորթել, արյունը խմել:

Գնում ելի ժամերով նրա հոր տան մոտ ման
գալիս, նույնիսկ իրեն՝ Ամլիկին տեսնում, մի-
քանի քայլ և լի կատարում. մոտենալ, սպանել...
Մեկ ել սուր մի միաք խանչալի պես կտրում եր
սպանություն գործելու ցանկությունս ու յետ
մղում ինձ:

ԶԵ վոր նրան սիրում եմ: Զարմանալու բան
չկա: Այդ բոլորը կատարվեցին նրա համար, վոր
կնոջս շատ ելի սիրում:

Ամլիկը լերեխաներին ուզեց, չտվի: Յերեա-
կալում եք, չստիպեց: Ինձ համար գաղտնիք
մեաց այդ: ԶԵ վոր նա լերեխաներին շատ եր

սիրում: Ինչու լռեց, ինչպես ե համբերում: Իսկ
յես, համոզված յեղեք, յեթե յերեխաների սերը
չիներ, ինքնասպանություն կկատարելի:

Թես կարծում ելի, թե կինս ինձանից բա-
ժանվելուց հետո նեղ դրության մեջ կընկնի, հա-
վատացած ելի. վոր բոլորն ել կարհամարհնեն
նրան, յերեսին կթքեն, վորպես ամուսնուն թող-
նողի, վաստ վարք ունեցողի: Բայց այդպես չե-
ղավ: Ճիշտ ե, մեծատունները, մեր կոմսոմոլի
լիզվով ասած՝ կուլակները, հենց այսպես ելին
վարվում, ինչպես յես ելի յենթագրում, համա-
գլուղը ղեկավարողները բոլորովին ուրիշ դիրք
բռնեցին: Կոմբջիջն ամեն տեղ Ամլիկին առաջ
եր քաշում: Գյուղի յերիտասարդ աղջիկների հա-
մար բաց արին կարուձնի արհեստանոց ու
նրան վարիչ նշանակեցին: Ամլիկն ամեն տեղ
կար՝ կոմբջիջում, փոկում, պատգամավորական
ժողովում ու խորհրդային գյուղում գյուղություն
ունեցող մյուս կազմակերպություններում: Վեր-
ջապես, դարձյալ հակառակ իմ սպասածի, յերբ
գյուղխորհրդի վերընտրություն կատարվեց, նրան
ընտրեցին գյուղխորհրդի դի անդամ: Այս բոլորը,
ընական եր, իմ մեջ պետք ե խոշոր փոփոխու-
թյուն առաջ բերելին:

Քիչ առաջ պատմեցի, վոր Ամլիկը խոստո-
վանվեց, թե մինչև մեր բաժանվելը մի տարուց

ավել ե, ինչ նա ժողով ե գնում: Հետագայում
իմացա նաև, վոր նրան առաջին անգամ ժողովի
տանողը լեզել ե կոմմունիստ Վահանի կինը, բախ-
տիս գլխին կրակ թափողը նա յե: Ուզում ելի
մի թագուն տեղ բռնել եդ կնոջը, մազերը պոկ
տալ, քաշքան վրեժս առնել: Վորոշում ելի և
ինքս ինձնից խորհուրդ հարցնում՝ լավ վորոշում
ե, գնամ Վահանի կնոջը ջարդեմ: Յերկար մտա-
ծում ելի ու գտնում, վոր վատ վորոշում ե: Ան-
ցածն անցել ե, պետք ե լոել, կոմմունիստների
հետ կովի բռնվելը հեշտ բան չե:

Դարդը սիրտս կրծում եր, մաշում: Յերե-
խաներին պահող կար, բայց շատ ելին լաց լի-
նում: Ի՞նչ անել, ուր գնալ: Ճամպա ցույց տվող
չկար:

Արցունքս գալիս ե, լսում եր, ձայնս դողում
ե, զսպել չի լինում: Վորքան տանջալից որեր
ելին:

Ամլիկին ընտրեցին խորհրդի անդամ: Ես
ի՞նչ աշխարհ ե, ով եր նուան բան տեսած: Պատ-
մում են, վոր Ամլիկը կոմմունիստ ե գրվել, լավ
գրում, կարդում ե: Նրա մասին լսած ամեն մի
լուր սրտումս կրակ եր վառում, այրում ինձ,
խորովում:

Շատ, շատ ե դժվար նման դժբախտություն

տանելը։ Թող ձեր թշնամին անդամ արդպիսի
և որեր չտեսնի։

Ամլիկը գյուղխորհրդի անդամ դառնալուց
հետո՝ մի որ ել կանչեցին ինձ գրասենյակ ու
պահանջեցին, վոր յերեխաները տամ նրան։

— Վա՞նց թե յերեխաները տամ նրան, չե՞ վոր
նրանք իմս են, չեմ տա. — բղավեցի լես։ Պատաս-
խանեցին, վոր խորհրդալին իշխանությունը ծնող-
ներին յերկու կողմին ել միենույն իրավունքն ե-
տալիս յերեխաների նկատմամբ։ Ամլիկն իրավունք
ունի պահանջելու։

Յերկու յերկար որ վիճելուց հետո համա-
ձայնության յեկանք։ Ճիշտն ասած՝ վերաբեր-
մունքս Ամլիկի նկատմամբ վորոշ չափով փոխ-
վել եր։ Հաճախ ցանկանում ելի, գոնե հեռվից,
նայել նրան։ Ամբողջ գյուղը խոսում եր Ամլիկիս
մասին։ Մի գյուղ եր — մի կին։

Ամլիկը գյուղի զրուցի նյութն եր։ Ուրիշ
մարդիկ համակրանքով նրա անունը տալիս ելին,
խանդում ելի։ Ուզում ելի մոտիկանալ։ Մի
տարի յեր, վոր խոռվ ելինք։ Յեկ յերեխաների
խնդիրը հարմար առիթ եր մեզ մոտեցնելու։

Համաձայնվեցի յերեխաները տալ նրան պա-
հելու։ Խոստացա յերեխաների բոլոր ծախսը տալ,
չնայած Ամլիկը չեր ուզում։ միայն շաբաթական
մեկ անգամ յերեխաները պետք ե բերելին մեր

տուն, վոր տեսնեմ։ Զե՞ վոր հայր եմ։ Հայր Յե-
րեխաները տարավ։ Մնացի մենակ—աղռավի։
Նման բնումս կուչ լեկած։

Գիշերները հոգեկան հիվանդի նման զառան-
ցում, տանջվում ելի։ Ասենք՝ հոգեկան հիվան-
դից վոչչով պակաս չելի, մնում եր դուրս ընկ-
նեմ ու փողոցում գժություն անեմ, լերեխաներ
հալածեմ։ Յերբեմն ել ինձ հավաքում ելի, զգաս-
տանում, ինձ նախատում։

— Զորան, մազը լերկար մի կնոջ չափ ել
չկաս, ամոթ չմ քեզ, իմ յես թուլանում, տունդ
քանդում, գնա ուրիշ մի կին ուզի. ոջախդ քո
ձեռքով որան ես անում, խելքի լեկ։ — Ինքս ինձ
նախատում եմ ու սրտապնդում, բայց կրկին
միտքս փոխվում ե։ Ի՞նչ անեմ, ամուսնանամ
ուրիշի հետ։ Իսկ Ամիկը, նա ուրիշի հետ ապրի։
Զե, չեմ դիմանա։ Պատահում ելին դեպքեր, ամ-
բողջ գիշերը դըսում, գյուղից դուրս, չոլերումն
ելի անցկացնում։ Լուսնի ու աստղերի հետ խո-
սելով, դարդս նրանց պատմելով։

Աշխատելու ցանկություն բոլորովին չունե-
լի։ Ամեն ինչ ավելորդ եր թվում ինձ։ Ո՞ւ հա-
մար եմ ապրում, ում համար եմ աշխատում...

* * *

Յեզ մի որ, հանկարծ, մոտեցա հայերուն ու
պիսարկս վերցրի։ Յերդվում եմ, սարսափս բռնեց։
Ինձ թվաց, թե գժված եմ, ցնորված։ Գլուխա

բնկորովին ճերմակել եր, մի հատ սև մազ անպամ չկար, ծերացել ելի՛ Ե՛, դարդը, սիրտս կրծծող դարդը զուլում եր, զուլում: Զարհուրելիի այդ վալրկյանին գլխումս մի միտք ծագեց:

Գնալ ու հենց ալսպես ճերմակած գլուխս բաց, խնդրել, աղաչել...

Լուսնկա, սիրուն յերեկո յեր: Գժի նման լուսնի պարզ լուսով վազեցի Ամլիկի տուն: Նա հոր տան կողքին մի փոքրիկ ոթախ եր վարձել ու այնտեղ եր ապրում:

VIII

Հեալով տուն ընկա և առանց չորս կողմս նայելու դողակեն մոտեցա Ամլիկին: Ծնկներս չդիմացան, իսկուն ծալվեցին: Նա հանգիստ նստած յերեխաների հետ խաղում եր: Հենց վոր ինձ այդ դրության մեջ տեսավ, տեղիցը ցատկեց, աշքերը լայն բաց արավ ու ձեռքերը մոտեցըց, ճերմակած գլուխս գրկեց.

— Խեղճ իմ Զոբան, քոռանամ յես...

Արցունքի կաթիլները ճակատս թրջեցին: Ճակատս թրջող արցունքի կաթիլները նոր սիրտ ու նոր հոգի տվին ինձ: Զգացի, վոր մոտ, շատ մոտ խղճահարված սրտի հառաջանքներն են՝ արցունքի պաղ այդ շիթերը: Ապրելու մի մեծ ու վառ յեռանդ տարածվեց սրտում:

Գլուխս զեր բարձրացրի, շրթունքներս մոռտեցրի նորից ինձ կրանք տվողի ճակատին ու շնչացի.

— Ամլիկ ջան, ծերացել եմ, ներիր:

* * *

Բարեկամներս, զղջումի խոսք լսեցիք, խրատվեցեք, զգուշ յեղեք: Յես ինձ հիմի բախտավոր եմ զգում, Արդեն յերկու տարուց ավելի յե, վոր մենք նորից միասին ենք ապրում: Ամլիկս դեռ կարուձեմ գպրոցի հսկիչն ե, իսկ յես նոր եմ ընտրվել տրակտորալին ընկերության վարչության անդամ:

Կուսակցության մեջ մտնելու համար դիմում եմ պատրաստել: Հիմա գյուղում ակտիվ հասարակական աշխատանք եմ կատարում, իմ անձնական գործերով այլևս չեմ կարող զբաղվել, ամբողջ գյուղի գործն իմ սեփականն եմ համարում: Ուր վոր գնում եմ, Ամլիկս հետս ե: Թարմացել եմ, բոլորովին թարմացել: Հավատում եք, թե չե, կոմսոմոլի սիրտ ունեմ, միայն մազերս են խանգարում. ճերմակած ու տխուր մազերս...

* * *

Կոռպերատիվ յեռամսյա դասընթացքների կուրսանտ Զորան Ղուլյանը յերբ զրուցը ավարտեց, հայացքներս նրան վոլորեցի և նկատեցի, վոր զարմացած ինձ ե նայում:

Ժպտացի:

— Ընկեր Հովիկ, Ի՞նչ եք գրում, միթե
դուք ինձ չեք լսել, զ՞ուր եմ պատմել: Վայ, վայ,
դուք լոթ լերես գըել եք: Զեք լսել ինձ:

Յեվ Նա Նեղացած հայացքը վար թողեց:

— Սիրելիս, լսել եմ, մանրամասն լսել, մի
նեղանա:

— Բա վոր ինձ լսել եք, ալդ լոթը լերեսն
ի՞նչպես եք գըել:

— Ընկեր Զոբան, գրածս քո պատմածի
համառոտ բովանդակությունն եւ:

— Ում համար,—ծիծաղելով, ուրախացած
հարցը նա:

— Կարդացողների. — պատասխանեցի լես ու
կանգնեցի: Ժամի լոթը մոտենում եր, պետք ե
գնայի դասի. խոսակցիս ձեռքը սեղմեցի և հայտ-
նեցի, վոր գնում եմ: Նա բամբակի մայանչի
պես ճերմակ ու թափ ունքերը լետ տարափ,
հասցը ճակատին նստած ճերմակ խոպոպնե-
րին, ժպտաց ու ասեց.

— Դե վոր գրում եք, խնդրում եմ գրված-
քի անունը զղջում դնեք: Լավ կլինի, վոր գրեք
ու մոտս կարդաք: Յես ձեզ կոգնեմ: Խնդրում
եմ, նկատի կառնեք, լես վատ մարդ չեմ:

Նույնպես ժպտալով պատասխանեցի նրան
ու դուրս լեկա: Հանրակացարանի շեմքին ելի,
լերբ ականջիս լսափողին մի ծանոթ ձայն հասավ.

— Զղջում, զղջում...

ՏՈԿԱՐ ՎՈՍԿԱՆ ՎԱՀԱՆՈՎԸ.

Մեպտեմբերի հինգի յերեկոյան եւ:

Թե «Ապրիլի 28»-ի և թե «Բոլշայա Մորսկայա» փողոցներից՝ բանվորական ջոկերը մեկ մեկու յետեկց մտնում են հանրակրթարանի բակը՝ հետները տանելով լիաթոք ծիծաղ, աղմուկը թնդում ու յերգ...

Հանրակրթարանի լայնատարած բակը նման ե ալիքավոր ծփծփան ճակի: Չորս հարյուր և ութսում բանվոր-կուրսանսները վողողել են բակն ու բարձրաձայն յերգերով, հոհուցներով թնգացնում են շենքը: Յերկրորդ հարկի լայն պատըշդամբում խտացել են մոտ յերկու հարյուր բանվոր ու հերթով ցուցակագրվուան են: Ամեն մեկը ցանկանում ե ինքը առաջ գրվել: Հրում, խոսում, աղմկում են:

Կուրսանտ Թորոսյանը շապկի կոճակները արձակել ե, կուրծքը բացել ու քրտնակոլոլ գեմքով հանրակրթարանի գրասենյակի դռան առաջը կանգնած՝ կարգ ե պաշտպանում: Յեթե Թորոսյանի յեռանդուն դիմադրությունը չլինի, բանվորները հեղեղի նման ներս կխուժեն գրասենյակ:

Ուսուցչունի Մագթաղը՝ թուզ կաղմվածքով,
վարդաթուխ նիհար դեմքով, աչերը խամրած,
բայց բարեժպիտ, սուր ծնոտով մի կին, գրասե-
ղանը մոտեցրել ե գրասենյակի դռանը և ցու-
ցակագրում ե բանվորներին:

Այդ յերեկոյան պետք ե ցուցակագրվեն մի-
այն հարյուր բանվոր. իսկ ընդհանրապես ուսում-
նական տարում հանրակրթարանում ընդունվելու
յեն չորս հարյուր հոգի: Ցուցակագրվող բան-
վորների մեջ կան աղվամազը դեռ նոր բուսած
պատանիներ, հասունացած յերիտասարդներ, տա-
րիքավոր մարդիկ: Բոլորի դեմքին՝ ժպիտ: Մի
քաղցր ժպիտ:

Ահա, ցուցակագրվելու համար ուսուցչունի Մագթաղին մոտեցավ կաշվե պիջակը հագին,
յերկարավիզ կոշիկներով, կաշվե կեպի ծածկած,
դեմքը մազոտ, առուզգ կազմվածքով, գլուխը
ճերմակած, տարիքավոր մի բանվոր:

— Հընկեր որիորթ, անումս Վոսկան ա,
ազգս՝ Վահանով, փեշակով տոկար եմ, խնթրում
եմ ինձ ել գրես:

Հնկեր Մագթաղը նալեց ծերացած բանվո-
րին, գննեց նրա արտաքինը և ժպտաց:

— Հնկեր Վահանյան, դուք արդեն տարի-
քով մեծ եք, շուտով յերևի աշխատանքից ել
կաղատվեք, ձեր դպրոց գալը միտք չունի, չենք

կարող ընդունել. ավելի շուտ՝ իրավունք չունենք:

Ճերմակագլուխ բանվորի սև ու խոշոր աշ-
քերը փայլատակեցին:

— Յես քեզ ասում եմ, դու գրի, կարթա-
լու ըշտահ ունեմ, ել տարիքի մեծ լինելը վորն ա:

— Ընկեր, մեզ կարգադրված ե հիսուն տա-
րեկանից բարձրին չընդունել:

— Հը, դա յել նոր «պրիկազ» ա. բա վոր
քառասուն տարվա բանվոր Վոսկան Վահանովին
չընթունեք, ել ում պետք ա ընթունեք: Հընկեր
որիորթ, դու գրի, տարիքի հետ գործ չունես,
յես եղ «պրիկազը» տվողներին ըռազի կանեմ:

— Ընկեր Վոսկան, մեղք ե, խեղճ ե ձեր
ուղեղը, թողեք հանգստանա, առանց այն ել
հոգնած ե:

Տոկարն այս անգամ միքիչ ջղայնացավ:

— Դա հինչ բան ա, ուզում եմ կարթալ
սովորեմ՝ ճամփես կտրում եք:

Ճերթի կանգնածները հուզվեցին:

— Ե՞ս, հեյ, հընկեր «ստարիկ», ջուղար մի
տա, շուտ արա, գնա, մենակ դու չես:

Ու առաջ խաղացող հոսանքը վշտացած տո-
կարին տաշեղի նման նետեց հեռուն:

Տոկար Վոսկան Վահանովը գազազած, դո-
ղալեն, մոտեցավ ու հենվեց պատշտամբին:

Բակում աղմուկ եր, ծիծաղ, թնդիրուն, ա-
ղաղակ:

* * *

Յերեկոյան ժամը տասը կինի։ Հանրակըրթարանի բակում աղմուկը դադարել ե։ Բանվորները գնացել են։

Պատշտամբում ցուցակագրվողներից մնացել են յերեք հոգի։

Տոկարը դեռ անշարժ հենված ե պատշտամբին։ Դարանից դիտող զայրացած վորսկանի նման, նա մի հայացք հառեց գրասենյակի դռան կողմը, տեսավ, վոր մարդ չկա, խոր հառաչ արձակեց ու շարժվեց։

Վոսկան Վահանովը մտավ գրասենյակի։ Բանվորի ծանր նայվածքով դիտեց հանրակրթարանի վարիչ ընկեր Գալուստի ակնոցների տակից ցուլացող մանր ու դյուրաշարժ աչքերն ու մնաց անշարժ կանգնած։

Վարիչը ճնշվեց։ Նա մոտեցավ Մագթաղին ու նրա ականջին փսփսաց։ Մագթաղը ժպտաց։ Նրա նիհար դեմքի մկանները ձգվեցին ու կրկին կծկվեցին։

— Հընկեր վարժապետ, ասում եմ, յեթե ես տարի ինձ բանվորական ուսումնարանում տեղ չտվիք, վախտը վոր գա, ձեզ հմար վատ կընի, են վախտը թեկուզ խնթրեք ել, գալ չեմ։ Համամարթու սիրտ կոտրելը լավ չի, քառառուն տարվա բանվորին սպանում եք։

Վոսկանի բառերը հնչում ելին ծանր, վշտացած, կարծես թե անդունդից ելին դուրս գալիս: Իսկ դեմքը, նրա դեմքն այնքան տխուր եր...

— Ըսկեր Վոսկան, մենք ցավում ենք, վորձեղ նման բանվորին «չե» լենք ասում. բայց ինչ արած, կարգն ե այդպես: Իսկ ինչ մնաց ձեր այն հայտարարությանը, թե հետագայում մեղ համար վատ կինի՝ ձեղ դպրոց կինդրենք, դուք չեք գա,— գա արդեն անհասկանալի լե մեղ համար: Ինչո՞ւ պետք ե այդպես լինի:

— Բա, պետք ա խնթրեք, նրա խոսքն ովկապա կոտրի:

— Ո՞ւմ խոսքը:

— Նրա, վոր ասել ա՝ Հոկտեմբերսկի հեղափոխության տասը տարվա դլիին սավետսկի լերկրում պետք ա մի հատ անկիրթ-անդրագետ մարթ չըլնի: Ի՞նչ կասես հիմա:

— Հետո ի՞նչ, մենք այդ գիտենք,— ժպտաց Գալուստը:

— Հետո են, վոր ձեղ հուզ կտան:

Տոկար Վոսկանը մատերի վրա սկսեց հաշվել:

— Քսանլերկու, քսանլերեք, չորս, հինգ, վեց, ոխտը, մնացել ա հինգ տարի: Հոկտեմբերսկի հեղափոխության տասը տարին դեռ չթամածած՝ հընկեր Լենինը հաշվի կնստի: Հաշվի ժամա-

նակ մեկ ել կտեսնա, վոր Զորնից Գորոդի լիտեր-նի զավողի տոկար Վոսկան Վահանովը մնացել ա անգրագետ, ասլանի պես յումբուղով ստոլի իրեսին կշրխկացնի ու հրաման կտա, վոր մեղավորին պատժեն։ Հը՛, հընկեր վարժապետ, ծիծաղդ գալիս ա, ես ա՝ ասում եմ, Են վախտը խնթրեք ել՝ դալ չեմ։

Ու հաղթանակ տանողի հպարտությամբ տո-կարը մի քայլ առաջ գնաց։

Թե կուրսանտ Թորոսյանը, թե վարիչ Գալուստը և թե ուսուցչուհի Մագթաղն զգացված նայում ելին խոժոռագեմ, կնճռաճակատ բան-վորին։

Թորոսյանը դիմեց վարիչին։

— Վորապես բացառիկ դեպք, ընդունենք։

— Գաղեթ կարթալը սովորեմ, հերիք ա, ել վոչինչ բան չեմ ուզում, կցկտուր վրա բերեց Վոսկանը։

Ցերբ Մագթաղը՝ հարցացուցակն առաջը դրած՝ առաջարկեց տոկարին հարցերին պատասխանել, Վոսկան Վահանովը ցնծաց, պայծառա-ցավ։

Հարցայուցակում արձանագրվեց հետեւալը.

«Վոսկան Արշակի Վահանով, Հայ, Հիսուսինդ տարեկան։ 1920 թվից մետաղադործների միության անդամ։ Անկուսակցական։ Քառասուն տար-

վա սև բանվոր, վերջին յերեք տարումն ե տուկարություն սովորել: Անգրագետ: Ընտանիքավոր: Ընտանիքը բաղկացած ե տասնմեկ անձից: Ներկայումս կրտսեր տոկար»:

— Հընկեր որիորթ, ավելացրու վրեն, վորուզում ա միայն մի թեթև գագեթ կարթալ սվորի:

Ապա նա գլխարկը վերցրեց, ժպտալով բարի գիշեր ասեց ու գնաց:

Ելեկտրավառ փողոցում տոկար Վոսկանը մի ծանոթի յեր փնտռում, վոր ուրախությունը նրան պատմի, հանգստանա:

ԻՆՍՍՈՒՆ ՅԵՐԿՈՒ ԱՄԻԱ.

I

Մայրս մերձիմահ, չոր կարպետի մեջ փաթաթված, ծանը զառանցում եր: Մեր խրճիթի սրահը ցածր եր ու լայն, ամռան շոգ որերին այնտեղ բավականին հով եր լինում: Վոսկրացած մորս դուրս բերի սրահը, վոր թարմ ողի մեջ գուցե մի որ ևս ապրի: Խրճիթի ներսը խավար եր, խոնավ, հիվանդի համար վտանգավոր:

— Կմեռնի—մտածում ելի յես և կարպետի մեջ տափակցած ազիզ մորս շուրջը ծտի ճուտի պես ծլվլալեն պրպտում:

Միուս յերեխաները մանը ելին ու վտանգը չելին զգում: Նրանք միայն հաց ելին լացում: Յերրորդ շաբաթն եր, վոր մեր տանը հաց կոչվածը չեր յերևացել: Մայրս մինչև այդ իրեն բերանից քաշեց, մեզ տվեց ու հողեկան յերկար տառապումներից հետո մտավ անկողին՝ չոր կարպետի մեջ: Յերեք շաբաթ եր, վոր մորս կերակրում ելինք խաշած բանջարի ջրով. վախենում ելի, վոր բանջար ուտեցնեմ. միքանի որ առաջ

մեր հարևանի հիվանդ յերկու յերեխան խաշած
բանջար կերան ու մեռան:

Յերբ բանջարի տաք ջուրը մոտեցնում ելի
մորս գունատված շրթունքներին, նա միքիչ կեն-
դանանում եր, փակած աչքերը բացում, դալուկ
ժպտում ու մի յերկու կում խմելուց հետո՝ կըր-
կին թուլանում եր, գլուխը դնում բարձին:

Աղվամազը դեմքիս, խակ պատանի ելի, հու-
սահատվել, գլուխս կորցրել ելի: Մորս վողբեր-
դական այդ վիճակը մի այնպիսի ծանրություն
եր դրել կըրծիս, վոր շնչել չելի կարողանում:

Կյանքն ինձ համար ձանձրալի յեր դարձել,
դաժանացել. հավատացած ելի, վոր մալրս մե-
ռավ նրա յետեից մըուս յերեխաները կդնան,
ու յես, վոր հորս մարդող ոջախի սլունն եմ, ան-
պատճառ կհետեւմ հարազատներիս, անպայման
կմեռնեմ:

Այդ որը, յերեք անգամ, վոտքերս քարշ
տալով դուրս յեկա գյուղ. ուզեցի գնամ միքա-
նի հարուստների տուն մորս համար մի կտոր
հաց կամ կաթ խնդրեմ, բայց չհամարձակվեցի:
Չե վոր յերեկ ել ելի գնացել, ութը մեծ ոջախի
շեմքում կանգնել ու խնդրել. վոչ մեկը յերեսիս
չնայեց, խնդրեցի և աղի արցունքն աչքերիս յետ
դարձա:

Հորեղբալըս, վոր բավականին հարուստ եր
ու հրեղեն քաղցի տարիներն ինքն իրենով լավ
կառավարվում եր, վերջին հույսս նա յեր մնա-
ցել։ Հորեղբալըս ե, կխղճա։

Յերբ գնացի հարազատ հորեղբոլս շեմքին
ծառս յեղա, նրա մեծ վորդին՝ ցարական սպա
Պարուլը հեգնական մի հայացք նետեց վրաս ու
ժպտաց։

— Ելի՞ հաց, մալրդ դեռ մնում ե... ԶԵ,
բալամ, հաց չունենք, գնացեք, ինչ ուզում եք՝
յեղեք։ Զերոնք մոտեցել են, ուրախացեք, մորդ
ասիր չմեռնի, ձեր բարեկամ բայլշեիկները գալիս
են, կգան ու նրանք հաց կտան ձեզ։ Լավ կլինի,
չԵ։ Մեր ունեցածը ձեզ հետ կես կանեն... Հա,
հա, հա, բայց խի՞ վողջ մնաք, վոր կես անեն...

— Ապուշ մարդ, ոձ, կարիճ, — մտքումս կըր-
կնեցի յես ու մնացի շեմքին արձանացած։

— Հացի՞ յես սպասում, կորի՛, լակոտ։ Տես-
նում ես, հրացանը վերցրած գնում եմ կոփկ.
բայլշեիկները գյուղին մոտենում են... Լակոտ...
գնում եմ կոփկ... Եգուց վոտդ կըծքիս կդնես,
թե յեզները բաժանենք, գնում եմ, վոր չթող-
նեմ գան...

Աչքերս մթնած, քաղցած, հուսահատ, գայլի
ձագի պես վոռնալով, հարազատ բարեկամիս հայ-

հոլելով, նրա դիվալին խոսքերից խոցված դարձա տուն:

II

Յերկըորդ ամիսն եր, վոր մեր գավառի դաշտավին շրջաններն ու լեռնալին միքանի գյուղեր խորհրդայնացել ելին: Խորհրդայնացած այդ գյուղերում չքավորական շերտն ուժեղ եր, ժամանակին ապստամբեց ու կարմիր բանակից ոգնություն խնդրեց: Մեր գյուղը բեգական եր, թառած անառիկ, անտառապատ լեռների գրկում, մուտքն անհնարին: Հակահեղափոխականների այդ բնում, մարդկագանների մութ վորջում լերկու ամիս եր, վոր միքանի տուն չքավորներ. սովի և տանջանքի մատոնված՝ ծեծում ելին մահվան դուռը: Գավառի հակահեղափոխական ուժերը հավաքվել ելին մեր գյուղն ու բարձր ժայռերի կատարից լերգում ելին խորտակվողի վերջին լերդը:

Մայրս... մայրս... մայրս... որը մթնեց...

Գիշերը կարճ եր, շուտ եր անցնում. դե, ինչ ելինում ամռան գիշերը:

Լուսաբացին գյուղում մի սոսկալի և արտասովոր աղմուկ բարձրացավ: Հրացանների ճարճատյունը լերկինքը բռնեց: Գյուղի վրա կարմիր կարկուտ եր մաղվում...

— Ի՞նչ... փախ... ով ե փախչում... բայլ-
շկիկները... գլուղ են մտնում... ու հականեղա-
փոխական խմբերը գլուղը վառելով մի ժամվա-
ընթացքում անհետացան:

Ծխով ծածկված գլուղը մտան պարտիզա-
նական ջոկերն ու կարմիր բանակի սրածալը
փափախներով, գարնան պես ալ ու կանաչ հա-
գած վաշտերը:

Ի՞նչ մազալու փափախներ ունեն:

Մեզ հավատացրել ելին, թե դիմադրող գլու-
ղերը գրավելուց հետո բայլշկիկները կին, տղա-
մարդ, աղջիկ, յերեխա՝ բոլորին, բոլորին մոր-
թոտում են: Մինչև այդ վայր մահվան դուռն
աղերսելով ծեծում ելի, թե՝ յեկ, բոլորիս միասին
տար. բայլշկիկների մուտքը մեր գլուղը մահվան
ցանկությունս այրեց, ոդը ցնդեցրեց: Ուզում եմ
ապրել և ապրելու միջոցներ եմ փնտուում մորս
համար: Կասկածելով, վոր բայլշկիկները հիվանդ
մորս կմորթեն, ազատության արշալուսի առա-
ջին ցնցող ցողերի տակ նրան կանաչ խոտով
ծածկում ելի: Իսկ մորս թագցնելուց հետո յես
մյուս յերեխաների հետ կծածկվելի: Ապրելու,
յերկար ապրելու ցանկությունս սիրտս կրծում եր:

Հենց մորս թագցնելու միջոցին յերկու սրա-
ծալը փափախավոր՝ շեկ զինվորներ մեր դռնով

անցնելիս նկատեցին կանաչի տակ ծածկված մորս
ու մոտեցան:

Սարսափս բռնեց, բայց նրանք շուանքով
մոտեցան: Շատ քիչ ուղևերեն գիտելի: Հասկաց-
րի նրանց, վոր մայրս ե, քաղցից թուլացել ե
և հիմա յել դժվարին հիվանդ ե, գուցե մեռնի...
Նրանք իրարու հետ խոսեցին, մեկը գնաց:

Ո՞... զարմանք... կյանք... կյանք... ի՞նչ եմ
տեսնում:

Ահա նա, շեկ, նոր ծլած բեղերով, ժպտե-
րես, թիկնեղ բանակալինը կրկին վերադարձավ
ու մի խոիտ հաց ե բերում: Առաջ նա գրպանից
սպիտակ թիթեղա մի տուփ հանեց ու բերանը
բաց արավ: Բանակալինն ինքն իր ձեռով մորս
կաթով կերակրեց ու հացը բաժանեց յերեխաների
մեջ: Ինձ պատվիրեց, վոր մորս լավ հետևեմ:
Նրանք յերկու շաբաթ մնացին գյուղում ու միշտ
գալիս ելին մեր սրահը հիվանդ մորս տեսնելու:
Վերջին որերը մայրս լավ կազդուրված եր: Յերբ
հրաման յեկավ, վոր կարմիրներն առաջ պետք ե
գնան, մայրս յերկու զինվորներին կանչեց մեր
տուն, համբուրեց նրանց ճակատներն ու խընդ-
րեց, վոր վերադարձին գան մեզ մոտ:

Հարազատի սիրով նրանք մեզ հրաժեշտ
տվին ու գնացին: Ամուան արևառ սիրուն որ եր,
վոր նրանք գնացին: Նրանց գնալուց հետո յեր-

կար մտածում ելի: Յես ինչու յեմ մնում... Սիրտս
թրվուց, ցանկանում եմ նրանց հետ լինել, ու-
զում եմ գնալ, նրանց հասնել, կարմիր զինվոր
գրվել... չե՞ վոր, ինչպես իրենք պատմեցին՝
նրանք ել ինձ նման քլասիբ տղերք են:

Մորս ասեմ, թե չե: Յեթե չթողնի, կփախ-
չեմ: Ու յերբ մորս ասեցի, վոր գնում եմ, նա
մտածեց, յերկար մտածեց, լուրջ նայեց ինձ
մայրական գթով, բռնեց ճակատս, պաշեց ու
շնչաց.

— Դե, վոր ուզում ես՝ գնա, վորդիս, Զո-
բանս... գնա, մի տանջլող մոր ել դու ձեռք
հասցըու:

Ընտանիքը հացի կողմից միքանի ժամանակ
ապահովված եր: Հեղկոմը բեգերի լիքն ամբարները
ցրել եր չքավորների մեջ, մեր տանը յերեք պարկ
լիքը ցորեն կար: Իսկ մինչև այդ վերջանալը ար-
տերը հնձելի կղառնան: Մայրս չի նեղվի: Գնամ:
Յես աշխուժացել եմ, լավ ընդունակ եմ զենք
գործածելու:

Կես ժամ չանցած, յերբ մեր սրահից դուրս
ելի գալիս, մորս արտասվախառը ձախնը սուր
դանակի պես ականջիս զարկեց.

— Բալա ջան, քեզ լավ կպահես... մի...
մի... ուր ես գնում, սիրտս... ախ, բալաս...
Վասին ու կոյին բարե արաւ

III

Այն որից անցել ե իննսուն յերկու ամիս:
 Կյանքը գեղջուկ պատաճուա փոխել, մի ուրիշ
 մարդ ե դարձրել: Կարմիր հեղեղի ալիքները
 տգետ Զոբանին մի այնպիսի ափ են հանել, ուր
 նա հիմնովին փոխվել ե, զարմանալի կերպով
 փոխվել: Մեր գյուղում ինձ չեն ճանաչի: Մորս
 այս չեմ հանդիպել, բայց գիտեմ, վոր նա վողջ
 ե և մեր գյուղի խորհրդի կազմում կա. մայրս
 հասարակական ակտիվ գործիչ ե. զուր չեր, վոր
 նրան կյանք ելի տենչում: Իսկ Վասիլն ու Կո-
 լյան մեր բարձրաբերձ լեռներում, քչքչան մի
 պաղ աղբյուրի մոտ ուրիշ ընկերների հետ հա-
 վիտենական քնած են: Նրանք ընկան հենց գյու-
 ղից դուրս յեկած որը: Մի բանդա անսպասելի
 հարձակում գործեց և ընկերներին խլեց: Մայրս
 գրում ե, վոր ամեն տարի գյուղի խորհրդար-
 նացման որը նրանց շիրիմներին այցելութիւն ե
 գնում, մի կուշտ լաց լինում ու դառնում:

ՅԵՂԻԿԸ.

Քաղաքի հարավ-արևելյան կողմի հոյակապ զորանոցներում կյանքը յեռում եր։ Զորանոցները թնդում ելին ուազմական նվագի ու յերգի ձախով։

Զորանոցի լայնատարած բակում գունդը վաշտերով բաժանված մարզվում եր։

— Վաշտ, ծնկի կրակինի, պատրաստ,— վորոտում եր մի վաշտապետի ձախ։

— Վաշտ, պառկած կրակինի, պատրաստ,— թնդում եր յերկրորդ հրամանը։

— Վաշտ, հակագաղ հագինիը, — հրաման եր արձակում մի յերրորդը։

Տված հրամանները կատարվում ելին արագ, զգաստությամբ, համաշափ ու ներդաշնակ։

Տաս ըոպե ընդմիջում տրվեց։

Ն գնդի յերկրորդ գումարտակի յերրորդ վաշտի կոկիկ հագնված, միշտ զգաստադեմ, արձվահայց ավագը զորանոցից գալով մարզատեղը, մոտեցավ բանակալին Յեղիկ Սևանին ու մի ծրար հանձնեց նրան։

Յեղիկն այդ պահուն խոսում եր ընկերնե-

րի հետ՝ կիրակի որը կազմակերպվող հրաձգալին մրցումի մասին, վորին պիտի մասնակցեր և ինքը, վորպես լավագույն հրաձիգներից մեկը:

— Տղերք, յեթե մրցանակ չտանեմ, հարամե, դարդու կդառնամ, շագանակագույն պիգմենտներով աչերում ժպիտը խաղացնելով ասում եր Յեղիկը:

Վոչ բարձր, միջակ հասակ ուներ Յեղիկը, կազմվածքով բարակ եր, ճկուն, դյուրաշարժ: Ընկերները նրան «կարմիր կաղակ» ելին անվանում:

Սկյանը՝ նամակ եր, վոր ստացավ:

Առանձնացավ վաշտից, քաշվեց, սաղարթոտ թթենու տակ նստեց ու ծրարի ծայրը պատեց:

Յերբ Սկյանը փորձեց ծրարի միջինը հանել, նրա պողպատի պես ամուր մատերը դողացին. նրա սիրտը մի անհաճելի բան զգաց ..

— Ամոթ ե, փալաս ես, ի՞նչ ե, կտրուկ յեղիր, —քանի վակրկյան մտատանջումից հետո Յեղիկն ինքն իրեն նախատեց ու ծրարի միջինը հանեց:

Յեղիկ Սկյանը ծրարի միջինը հանեց ու կարդաց.

«Սոսո ջան, յես ասեմ, դու գրի:

«Նամակս Տանձի գյուղից դեպի Կարմիր բանակ:

«Անուշ վորդի, Յեղիկ ջան, ընդունիր քո մոր կարոտալի բարել:

«ՅԵՂԻԿ ջան, բա դա սիրու ա, վոր քեզ
ունես. քար ա, քար: Անաստված վորդի, մերդ
խեղճ ա. Ջիգարը կտոր-կտոր ա լինում, սիրտն
երվում ա...»

«Հերդ մեռավ, դրեցինք՝ չեկար, բա քու
սիրտը չուզեց հորդ լերեսին մի բուռք հող դցել:
Կոմսոմոլներ շատ կան, համա քեզ պես անջի-
դար չեն...»

«Հերդ ջահել տղամարդ եր, դրա համար ել
քեզ կարմիր բանակ տարան, ասում են հիմի,
յեթե գյուղառի հրդի միջոցով «Վայեննի կամիսա-
րին» դրենք, վոր ՅԵՂԻԿ Սևանի հերը մեռել
ա, տունն անտեր ա, քեզ կաղատեն: Վորդի ջան,
մորդ համար մտածի:»

«ՄԵՐ հարևան Զատին ել ա կոմսոմոլ, հա-
մա քեզ նման չի, գարնանը մի առւն շինեց,
մորը մեջը դրեց. բա դու յերբ պիտի տան հոգ-
ոը քաշես:»

«Բալա ջան, սրտումս շատ բան կա, համա
գրող չկա, Սոսը լավ գրել դեռ չի սովորել, մին-
չե մի խոսքը գրում ա՝ կես ժամ ա անց կենում:

«ՅԵՂԻԿ, վախենում եմ ասեմ՝ հիվանդ տե-
ղի տակ պառկած եմ, դարդ անես: Ես ա մի
շաբաթ ա բերանումս ուտելու բան չեմ դրել:
Իմ կողմից ձեր կամիսարին խնդրիր, ասիր—
հընկեր կամիսար, մերս հիվանդ ա, խնդրում ա,

վոր տասն որով ինձ բաց թողնես, գնամ տեսնեմ ու գամ: Զե՛ չի ասիլ, գըել ելիր, վոր լավ հընկեր ա:

«Տասն որով լինի յեկ:

«Արտերը հասնում են, միքանի որից հետո գարին կհնձենք: Քույրդ՝ Շուշին մի տղա լաքերել, աչքերը քու աչքերի նման սիրուն են: Սոսն ասում ա՛ յերեխի անունը Լենին դնենք, քույրդ ել ասում ա՛ չե, Տրոցկի դնենք. ամեն որ սրանց մեջ կոիվ ա, յեկ բարիշացրու:

«Բալա ջան, յեկ, սիրտս թռթոում ա:

«Կարոտալի բարև քեզ ու քու ընկերներին: Քեզ բարև են ուղարկում Սոսը, Շուշիկը, նանը, փեսան ու նոր, աչքերը նախշուն տղան:

«Յեղո ջան, նա մեծացել ա, չինարի բոյի մի աղջիկ ա, վախենում եմ ուրիշ ուզող լինի, սիրտս վրեն ա, յեկ նշանենք, մորդ սիրտը մի կոտրի:

«Սոսո ջան, գրի, ասա կանուխ յեկ:

«Մնամ քու մալը՝ Սուլթան Սևանց:

«1927 թ. մալիսի 7-ին»:

Ամբողջ նամակը Սևանը կարդաց մի շնչում: Կարդաց, ու հազար մի տեսակ միտք ծագեց նրա գլխում... Նրա աչքին յերևաց Տանձի գլուղի միջին թաղում, գետափին, իրենց չարդախավոր խրճիթը: Դրսում, չարդախի տակ

դրած ե պապից մնացած փայտի ճռճռան թախտը։ Մալրը հիվանդ պառկած թախտին՝ հնամաշ մի վերմակ վրան քաշած, իսկ փոքրիկ Սոսը նստած նրա գլխի մոտ, աթոռի տեղ ծառալող կաղնի կոճղի վրա ու մատիտը ձեռքին, գողալեն գրում ե այն բոլորը, ինչ վոր ասում ե մայրը։ Ու այդ պատկերը ռանդի պես տաշում ե Յեղիկի սիրտը, սղոցի պես սղոցում նրա ուղեղը։

Պետք ե խնդրել ու գնալ, մտածում եր նա։

Մեկ ու կես տարի յե, ինչ Յեղիկը բանակումն ե։ Ընկերները բոլորն արձակուրդ են գնացել, Յեղիկը չի գնացել։ Ժամանակը վոսկի յե, շատ թանգ։ պետք ե մնալ ու սովորել, մի ամսից հետո անժամանակ բաց կթողնեն, զորացրում կինի, գնա գյուղում այնուհետև այնքան ման արի վոր... Այսպես ե մտածել նա ու չի գնացել։

Բայց մոր նամակն այդ որը ճնշեց նրա սիրտը, և նա վորոշեց անպատճառ արձակուրդ գնալ։ Ինչ վերաբերում ե այն բանին, վոր մայրն ասում եր՝ դիմում տանք, ազատեն քեզ, Յեղիկը դրա մասին չմտածեց, վորովհետև նման քայլ նա չի անի։ Իսկ մըցանակին մասնակցելը։

... Նրան տեսնելը չեր խանգարի։ հիմի բավականին գեղեցկացել ե, բայց չեմ նշանվի, դեռ վաղ ե, մտաբերելով մոր նամակի վերջին տողերը՝ մտածեց Յեղիկը։

Սաղարթուտ թթենու տակ, Յեղիկը մռայլադեմ նստած, լողում եր լերազների ջրերում, հանկարծ վորոտացին այս ու այն կողմից վաշտապետների հրամանները.

— Շարքիիի, Շարքիիի:

Յեղիկը սթափվեց ու քայլեց դեպի վաշտաշարքի:

Գնդի զինկոմը Սևանին ընդունեց իր առանձնասենյակը: Զինկոմի առանձնասենյակում վոչվոք չկար, միայն պատից նայում ելին հեղափոխության միքանի հերոսների համարձակաչաչքեր: Թուխ, գանգուր մազերով, մեծ կրակոտ աչքերով, շարքային կարմիր-բանակայինի շորեր հագած՝ զինկոմը բազկաթոռին հենված սպասում եր Յեղիկ Սևանի խնդիրը լսելուն: Զինկոմը Սևանին շատ լավ ճանաչում եր:

Յեղիկը լուր կանգնել եր զինկոմի առաջ, վոնց վոր քարե արձան:

— Ընկեր Սևան, մի ամաչի, խոսիր.—Նկատելով Սևանի դրությունը՝ խոսեց զինկոմը:

Սևանն՝ առանց մի խոսք ասելու՝ մորից ստացած նամակը հանձնեց զինկոմին:

Զինկոմը նամակը կարդաց, խորհրդավոր մի հայացք նետեց Սևանի մռայլ դեմքին ու հենց նամակի վրա մակագրեց:

Մայիսի տասնմեկին մի խումբ ընկերներ Սևանին ուղեկցեցին մինչև կայարան:

Սևանը տասնհինգ որով արձակուրդ եր
գնում:

Հաջորդ որը, ճաշին, գնացքը հասավ Շ...
կայարանը: Սևանն իջավ: Տանձի գլուղը Շ. կա-
յարանից քսան հինգ վերստ ե. վաղը Սևանը
գլուղը կճանապարհվի. սպասում ե, գլուղից ան-
պատճառ յեկողներ կլինեն՝ հետները կգնա: Մա-
յիսի տասներեքի առավոտան Շ... կայարանում
տարածվեց մի բոթ...

Նոր ժամանած գնացքը լրագրեր բերեց՝
արտասովոր բովանդակությամբ: Հեռագրերը հա-
ղորդում են՝ Լոնգոնում ԽՍՀՄ ներկայացուցչու-
թյունը շրջապատված ե վոստիկաններով: Արկոս
են խուժել անզլիական լրտեսներն ու խուզար-
կություններ են կատարում: Դրությունը լուրջ ե:

Սևանը մատը կծեց. դրությունը լուրջ ե:
Նա մի որինակ լրագիր գնեց ու միքանի անգամ
հեռագրերը կարդաց:

Շ... կայարանում տարբեր գունի մարդիկ
տարբեր կերպով են հասկանում յերեսութը:

— Անգլիան եղ բոլորը կատարում ե մեծն
Նիկոլայ Նիկոլայիչի խաթրու համար.—ասում ե
հաստավիդ բուֆետապան՝ Սերգեյ Մինասիչը, վոր
նախկին գնդապետ ե.—Ռուսաստանի տերերը հո
չեն քնել:

— Վոչինչ, վաղ ա թե ուշ՝ բախտը մեզ ել

կժպտա, ամեն որ անարդված չենք մնա. — այս ել ասում ե Շ... կայարանի գիմաց փոված թափուտ ծմակի նախկին տերը, վոր հիմա կայարանում մանրավաճառ ե:

— Տղերք, հարկավոր ե հրացանները յուղել, պատրաստ մնալ. — ասում ե յերկաթուղալին բանվորներին շուրջը հավաքած մի կոմիերիտական բանվոր. յես դրանց բուրժուատ են մերը... թող փորձեն, դուդաները կջարդենք:

Սևանը կայարանի յերեք կետերում հանդիպելով տարբեր մարդկանց, տարբեր տրամադրությունների, գլուխն որորեց ու առանձնացավ:

Սևանի ներքին աշխարհը վերածվեց կովադաշտի: Նրա ներսում կովում են կատաղի յերկու հսկաներ...

Գնալ գյուղ, թե անմիջապես վերադառնալ գումղը, մտածում ե Սևանը ու չի կարողանում վորոշել: Մի կողմից հիվանդ մոր կարուն ու են չինարի բոլով աղջկանը տեսնելու ցանկությունն են քաշում նրան, մյուս կողմից կոմիերիտական զինվորականի դեպի իր յերկրի պաշտպանության գործը տածած սերն ու պարտականությունը: Վերջինս ավելի հզոր ե, պատվաբեր մտածում ե Սևանը: Սևանը հիշում ե նախկին գնդապետի և կալվածատիրոջ ասածները, զգում ե, վոր նրանք՝ ուստական միապետության թափթփուկ-

Ները ուրախացել են, խնդում են: Յերիտասարդ
բանակալինը շուրթերը քաշում ե ատամների
տակ ու կրծոտում—այ լես ձեր են սրիկա
հերը... թողնեն՝ կտոր-կտոր կանեմ: Ահա և մա-
զութոտ լերկաթուղալին բանվորների խումբը.
միջակ բոլով կոմիերիտական մի բանվոր խմբի
մեջտեղ կանգնած՝ հեռագրերը կարդում ե, հրա-
ցանները լուղելու մասին ու բուրժույներին՝ լես
ձեր են մերն ե... ասում. լերեռում ե վոր քաջ
տղա լե: Սևանը վոգեռվում ե: Նրա սրտում
բռնկած կորիվը վերջանում է կոմիերիտական զին-
վորականի պարտաճանաչության ուժի հաղթա-
նակով:

Մի ժամից՝ հետո գնացքը կգա: Սևանը սըր-
տատրոփի սպասում ե:

Մայիսի տասնչորսին, ցերեկվա ժամը 2-ին՝
մի բանակալին կամաց բացավ և գնդի դահլի-
ճի դուռը և մտավ: Զինկոմը զեկուցում եր մի-
ջազգային դրության մասին. ուշացած դահլիճ
մտնող բանակալինը նստեց լետնի շարքում ու
լսողությունը լարեց:

Զինկոմի պղնձաւնչուն ձայնը կաշկանդել
եր բոլորին: Նրա արտասանած բառերը, ինչպես
հաղթանիստ գնդակի վրա իշնող ավտոմատ մուր-
ճի հարվածներ, ուժեղ են, ճնշող: Հազարավոր
բանակալիններ, վոնց մի մարդ, նայում են մի

կետի՝ զեկուցողին. իսկ մեկը, զեկուցողը՝ բոլորին:

Վերջում, վորպես զեկուցողի կոչին պատասխան, դահլիճում զնդզնդաց ուրախ, մենք կկռվենք—քայլերգը:

Զինկոմը վաշտապետների հետ դուրս երգալիս դահլիճից:

— Ըսկեր Սևան, դուք արձակուրդ չեք զնացել, — դահլիճի դուռն մոտ նկատելով հարցրեց զինկոմը:

— Գնացել եմ, բայց դյուդ չհասած՝ վերադարձա:

Զինկոմը հետաքրքրվեց:

— Գուցե ձեզ մի փորձանք ե պատահել:

— Չե, փորձանք չե, վոչինչ լնձ չի յեղել, բայց Շ... կայարանում ելի, վոր Արկոսի կողոպտման լուրն ստացվեց, մտածեցի՝ գուցե գունդը շարժվում ե, կուշանամ, մի նամակ գրեցի մորս ու յես վերադարձա. — Նա ասաց ու ժպտաց:

Զինկոմի դեմքը պայծառացավ: Նա մոտեցավ, շոյեց Սևանի թիկունքն ու հպարտացած գոչեց.

— Կեցցե իմ Սևանը, հարկավոր ե այս փաստն արձանագրել վորպես դասակարգալին մեր թըշնամուն պատասխան:

Զինկոմը Սևանին հայտնեց, վոր վաղն ան-

միջապես մեկնի գլուղ, հիվանդ ձորը տեսության.
իսկ արձակուրդը կհաշվեն վաղվանից:

Մալիսի տասն և հինգի առավոտյան Սևանի
ընկերները պատրաստվում ելին նրան ուղեկցել
մինչև կայարան. հենց ուզում ելին զորանոցից
դուրս գալ, վոր Սևանի անունով ստացվեց մի
հեռագիր:

«Յեղիկ, մայրդ մեռավ, շուտ յեկ:
«Քուլը Շուշիկ»:

Զորանոցը Սևանին թվաց՝ թե պտտվում
ե անխվի նման... Նրա աչքերը լճացան. նա հեն-
վեց զորանոցի դռան հորակապ պատին ու յերեսը
ծածկեց...

ՄԱՔՍԱՆԵՆԳԻ ՎՈՐԴԻՆ.

Սահմանապահ զորամասի քաղբաժնի պետը
ծխամորձը բերանը դրեց, լայն կուրծքը հենեց
գրասեղանի ծալրին ու կապուլտ աչերով դիմա-
ցը բազկաթոռին նստած շարքալին կարմիր-բա-
նակալինի հայացքները բռնեց:

— Ընկեր Բոխյան, պետիդ և ընկերոջդ մոտ
ես գտնվում, բոլորովին մի քաշվիր, համարձակ
յեղիր. Ի՞նչպես պատահեց այդ դժբախտությունը,
դիտավորալ կերպով կրակեցի՞ր:

Բոխյանը թուխ ու թավ ունքերը խոժողուած
կարճ պատասխանեց.

— Ընկեր պետ, վորպես սահմանապահ կար-
միր-բանակալին, յես միայն իմ պարտքս եմ
կատարել, ի՞նչպես թե դիտավորալ կերպով...

— Զեղավ, Գրո Ջան, դու հուզվում ես.
դարձիալ կրկնում եմ, յես քեզ համար և պետ
եմ և ընկեր. ազատ պահիր քեզ ու պատասխա-
նիր. — դիտելի՞ր, վոր քո հայրը մաքսանենգ ե:
Սիրելի Գրո, ամաչելու վոչինչ չկա, ինդրում եմ
ընկերոջդ առաջ սիրտդ բանաս. քո և հորդ մեջ
ի՞նչ թշնամություն ե յեղել:

— Մեր մեջ անձնական վոչ մի թշնամություն չի լեղել. — պետի ժպտափալ աչքերին ծանր նայելով, ջղադրգիռ մասերը ճմոելով պատասխանեց լերիտասարդ կարմիր-բանակալինը. — լես ու հայրս միմիայն մտածելակերպով ու հայացքներով տարբեր մարդիկ ելինք, հակառակորդներ։

Քաղբաժնի պետը լրջացավ։ Մի վայրկյան նրա դեմքի ժպիտը անհետացավ, ու խորաթափանց հայացքները սուզեց հուզմունքից դողացող շարքային բանակալինի մթապատ աչքերի հատակը։ Պետը զինվորի կրակոտ աչքերի հատակում ուրախություն ներշնչող մի բան գտավ, նրա դեմքը կրկին պայծառացավ, դուրեկան ժպիտը աչքերում խաղացնելով խոսեց։

— Սիրելի Բոխյան, այժմ ինձ այն պատմիր, թե յերբ և ինչպես լեղավ, վոր հորդ հետ ձեր հայացքների տարբերության պատճառով ընդհարվեցիք։

— Ընկեր պետ, անհարմար դրության մեջ եք դնում ինձ։

— Գրո, անհրաժեշտ ե, պետք ե պարզենք ալդ հարցը։

— Յերկար, շատ յերկար պատմություն ե. Ինչպես պատմեմ։

— Գուցե գրավոր պատասխանելիք. — Կրկնեց պետը։

— կարող եմ. — պատասխանեց Բոխլանը. —
յես գիտեմ, պետս ցանկանում ե պարզել իմ
դեմքը, շատ ուրախ եմ, մի բավականին լնդար-
ձակ բացատրություն կգրեմ ու կներկայաց-
նեմ։ Անհրաժեշտ ե իմ դեմքս պարզել, անհրա-
ժեշտ ե։ Զե՞ վոր յերկրի դոների բանալիները
սահմանապահներիս ձեռքին ե գանվում։

Քաղբաժնի պետը ժպտաց. նա վոտքի կանգ-
նեց, մոտեցավ, Բոխլանի ձեռքը սեղմեց։

— Կարծում եմ՝ մինչև վաղին այս ժամանակ
կարող կլինես բացատրությունը գրել։

— Այո, կարող եմ։

Բոխլանը քաղբաժնի պետին հրաժեշտ տվեց
ու գնաց։

Հաջորդ որը, ճիշտ նշանակված ժամին, սահ-
մանապահ Գրո Բոխլանը ներկայացավ քաղբաժ-
նի պետին։ Պետը նրան շատ մտերմաբար ու
սիրալիր ընդունեց։

Բոխլանը սկզբում անհանգիստ եր. միքանի
վայրկան լուռնալեց պետի նկարազարդ պատե-
րով առանձնասենյակը (յերեկ նա բոլորովին
չի ետաքրքրվեց այդ խնդրով), աչքով անցկացրեց
չոկտեմբերյան հեղափոխության հերոսներին ու
ջղերը հանգստացրած դարձավ պետին.

— Ընկեր Ազատունի, վերցրեք, ահա ձեզ
այն բացատրությունը, վորը յերեկ խոստացա

տայն։ Կարդացեք, կարիք լեղած դեպում, լեթե
հրամայեք՝ անմիջապես կներկայանամ, իսկ այժմ
թույլ տվեք ձեզ մենակ թողնեմ։

Գրոն ասեց ու մի մեծ ծրար մեկնեց քաղ-
բաժնի պետ Ազատունուն։ Պետը հիացած նայում
եր Բոխյանին. զինվորականի գեղեցկություն ու-
նի՝ բարձր բոյ, լայն թիկունք, դեմքի լուրջ ու
վճռական արտահայտություն։ Պետը նայում եր
ու մտածում.

— Զե՞, լերբեք, լերբեք այս մարմին մեջ
անազնիվ սիրտ չի լինի։

Նա ծրարը վերցրեց, նայեց, նայեց, ժպտաց
ու պատասխանեց.

— Կարող եք գնալ։

Բոխյանը պատվի վերցրեց ու դուրս լեկավ։

Քաղբաժնի պետը մենակ մնաց. նա ծրարը
պատռեց, միքանի անգամ միջի գրության վերջն
ու սկիզբը դիտեց, ծխամորճի ծալը բերանը
քաշեց ու բերանից քուլա-քուլա ծխի մալանչ-
ներ բաց թողնելով՝ հոնքերը խոժոռած կարդաց։

«ԱՍՖԽՀ հարավային շրջանի սահմանապահ
գորամասի հաղբաժնի պետին։

Սահմանապահ բանակային Գրո Բոխյա-
նից։

Բացատրություն մի մաքսանենգի սպանու-
թյան առթիվ։

Ընկեր պետ,

Ներեցեք ինձ, հարկադրված եմ բացարությունս յերկար գրել ու կանգ առնել մի շարք մանրամասնությունների վրա, վորոնց միջոցով միայն դուք լրիվ գաղափար կկազմեք իմ մասին, ու դեմքս կպարզվի ձեզ համար։ Բայց չե՛ վոր ձեր ցանկությունն ել հենց այդ եւ։

Դուք լավ ծանոթ եք մեր գյուղին՝ քերծերի վրա թառած իմ ծննդավայր Մոշուտին։ Գիտեմ, վոր սահմանամերձ այդ գյուղում դուք միքանի անգամ յեղել եք։ Ձեզ արդեն շատ լավ հայտնի յեւ, վոր սահմանամերձ գյուղերում մաքսանենգները քեչ չեն լինում։ Իմ ծննդավայր Մոշուտը, վորպես սահմանամերձ գյուղ, անցյալներում մաքսանենգների բուն եր։ Մինչև հեղափոխությունն այդ գյուղի բնակչության ճնշող մեծամասնությունը մաքսանենգությամբ եր զբաղվում։ Հայրս, վորպես մոշուտեցի, յերիտասարդ հասակում հայտնի մաքսանենգ եր։ Նա այդ արհեստով բավականին հարստություն եր դիզել։

Լավ եմ հիշում, սահմանապահ կազակները, մասնավորապես հրամանատարները հորս հետ մոտ բարեկամներ ելին ու նրան լայն աջակցում ելին հաջող գործելու համար։

Հայրս ամբողջ շրջանի տերն ու տնօրենն եր,

Նրա համար որենք, պրիստավ ու վախ չկային:
Հայրս մի սնդուկ լիքը փող ուներ: Մոշուտում
ծուխ չկար, մարդ չկար, վոր նրան պարտ չի-
ներ. հորս ահից դողում ելին: Փողը նրան ա-
մենակարող եր դարձրել:

Յես անչափ գոռոզ ելի, հպարտ ու չար
բնավորությամբ մի պատանի: Հորս անսահման
ուժն ու կարողությունը դրդում ելին ինձ հա-
սակակից ու նույնիսկ ինձնից մեծ տղաների
ծեծել, հայնոյել, ծաղրել: Սիրտս ուրախանում
եր, յերբ հորս տեսնում ելի գլուղանիջում մի
պարտապանի ծեծելիս, յերեսին թքելիս: Վայ
են պարտապանին, վոր մուրհակի ժամկետը լրա-
նալուն պես հորս չեր ներկայանում:

Սոսկալի, զզվելի, տխուր, անհաճելի վեր-
հիշումներ:

Բնկեր պետ, յեթե հնարավոր լիներ, տխուր
այս պատմությունը յես յերբեք, յերբեք չելի
գրի: Բայց խոսք եմ տվել ձեզ դեմքս պարզելու,
պետք ե կատարեմ:

Զորս տարի յեր, ինչ գլուղական դպրոցն
ելի հաճախում: Բայց յերկրորդ բաժանմունքից
առաջ չելի գնում: Բացարձակապես սովորելու
ցանկություն չունելի. հարուստի տղա յեմ, ինչ
կարիք կա կարդալու:

Մական, ընկեր պետ, հայրս սարսափելի

խիստ մարդ եր ու նկատելով, վոր գլուղական դպրոցում վոչինչ չեմ սովորում, մի որ ճաշի ժամանակ հոնքերը կիտեց, խեթ արավ, նայեց ինձ ու մռայլ ասեց.

—Գրո, իմ նամուսը դու հողին ես հավասարեցնում. անշնորհք ես, չես կարդում, ամոթա, վոր ինձ նման մարդու տղան չոբան մնա: ԶԵ, քեզ պետք ա մեկի հետ ուղարկեմ Բագու, մի փեշակ սովորես: Գնա, բալամ, գնա մի փեշակ սովորի: Գիտեմ, վոր հարստությանս գլխին ջուր կիսմես ու տկլոր են կողմին կ կանգնես: Գնա, քոնը փեշակ սովորելն ա:

Հորս այս խոսքերը ճիշտ ու մանրամասնությամբ եմ հիշում: Հենց այս վայրկյանին ինձ թվում ե, թե նրա խռպոտ ձայնը նոր հնչում ե ականջիս տակ:

Կարծեցի, թե հայրս հանաք ե անում, կամ վախեցնում ե, ուշադրություն չդարձրի: Սակայն դեռ չորս որ չանցած՝ մի ուրբաթ որ գլուղամիջից նա տուն յեկավ ու մորս պատվիրեց, վոր ինձ պատրաստի կիրակի ծեգին Բագու ճանապարհելու:

Գլուխս շշմեց: Լաց լեղա, բալց զուր եր: Մորս միջամտությունն ել չոգնեց: Համառ հալրս իր խոսքի տերն եր, պետք ե կատարեր: Յեվ

յես այսոր շատ ուղարիս եմ, վոր նա չլսեց ինձ
ու մորս ու համառելով իր խոսքը կատարեց:

Մեծ պատերազմի յերկրորդ տարվա սկզբին
եր: Դառն արցունք թափելով հրաժեշտ տվի
մորս, միակ փոքրիկ յեղբորս, վորին այս
չտեսա, համբուրվեցի հասակակիցներիցս միքա-
նիսի հետ ու մեր գյուղացիներից մեկի հետ
ճանապարհվեցի Բագու:

Բագվում հայրս ծանոթներ ուներ. մեր
գյուղացիներից կալին. հայրս նրանց հասցեյով
նամակներ տվեց, որ հետևեն ինձ, ու պատվի-
րեց անպատճառ փականագործի կամ տոկարի
մոտ աշակերտ մանեմ:

Արցունքը աչքերիս հասա Բագու:

Ծանր, շատ ծանր ապավորություն թողեց
ինձ վրա նավթաներկ. բազմամարդ այդ քաղաքը:
Ուր վոր նայում ելի, ծուխ, ծուխ ու մեկ ել
ծուխ: Ուր մնացին անտառապատ, կանաչ ու
կապույտ մեր լեռները, հարցնում ելի յես ինձ ու
հեկեկում:

Մեր գյուղացիներից վոչվոք չեր հավատում,
վոր յես պետք ե աշակերտ մտնեմ. կարծում
եմին, թե հայրս ինձ ման գալու յե ուղարկել:

Մի շաբաթ չանցած հորս ծանոթները Բա-
լախանում յերկու տարվա պայմանով փականա-
գործի մոտ աշակերտ տվին ինձ:

Բախտս կապեցի միշտ մութ ու թանձր, ծխա-
թխպերով ծածկված, դժգույն, մաղութապատ,
գիշեր ու ցերեկ ահարկու դղրդացող գործա-
բանի հետ:

Ալդ խավար աշխարհի ողը շնչել չելի կա-
րողանում: Մի շաբաթ, ամբողջ մի շաբաթ ջուր
չխմեցի: Հացից անգամ նավթի հոտ եր գալիս:

Հորս հայութում, անուժ ատամներս կրճտաց-
նում ելի...

Բախտն ինձ կամաց-կամաց հաշտեցնում եր
այդ սև պայմանների հետ:

Մեր գործարանը պատկանում եր մի հայ
հարուստի: Փականագործական բամնում, ճիշտ
ե, անչափահաս աշակերտներ կային, բույց իմ
տարիքին վոչ մեկը չկար. տասնհինգ տարիս դեռ
նոր եր բոլորել:

Սոսկալի ծանր աշխատանք ելի կատարում:
Ընկերներիս դեղնած, նիհար ու թախծոտ աչքե-
րը, նրանց վոսկրացած դեմքերը, հոգնած նայ-
վածքները շատ խորն ելին ազդում պատանեկա-
կան ջղերիս վրա: Յերբեմն նայում ելի նրանց ու
սոսկում: Միթե յես ել պետք ե հյուծվեմ ալդպես:

Որական 10—12 ժամ աշխատելուց հետո
յերեկոները դառնում ելի տուն ու ջարդված մար-
մով ընկնում թախտին: Պառկելուն պես իսկույն

աչքերս կուլ ելին գնում, իսկ առավոտները վարպետս ծեծով եր արթնացնում:

Ընկերներիս պես աստիճանաբար յես ել ելի հյուծվում, մաշվում:

Անցավ մի տարի:

Հորս նամակ չելի գրում, քար սիրտը կկակղի, կթղահարվի և մի որ նամակ կստանամ, թե՛ Գրո ջան, Բագուն թող յեկ: Բաց, ընկեր պետ, յես կատարյալ միամիտ ելի: Նա այնքան անջիգարն եր, վոր գոնե մի անգամ չհետաքրքրվեց ինձնով, իմ դրությամբ: Միայն մազը եր յերբեմն նամակ ու մանր-մունք ուտելեղեններ ուղարկում:

Կարծում եմ՝ այս մանրամանությունները ձեզ, ընկեր պետ, չեն ձանձրացնի: Սրանք իմ հոգեբանության կազմակերպման գործում մեծ դեր են կատարել:

Վերջապես հիմար մտքերիցս հրաժարվեցի:

Մի տարի ևս անցավ: Շուտով փոխվարպետ կլինեմ:

Գյուղից յեկողները տգեղ պատմություններ ելին պատմում հորս մասին:

Գյուղում աշխատող ուժ չի մնացել, բոլորը քշել են պատերազմի դաշտը: Գյուղը մերկանում ե, քամվում, աղքատանում: Բոխունց Սահակը քամվող գյուղի սիրտը մտած վերջին կաթիլ արյունը ծծում ե, վողջ գյուղն իր տունն ե հավա-

Քում: Ահա գլուղից յեկողների, պատմածների հաշմառութ բովանդակությունը:

Սիրոս մղկտում եր, դողում. մարմինս փշաքաղվում եր, յերբ լսում ելի հորս արարքների մասին բարձրացող այդ բողոքները:

Վորքան հեռվից ու վորպես ոտար ելի նայում հորս, նույնքան նա այլանդակված եր յերեսում ինձ:

Այնպես, ինչպես գործարանատերն եր յերկաթե քաղաքում իմ և ինձ նմանների կյանքը մաշում, ուժերը հասում, ճիշտ նման մի խոշոր չարիք ել իմ հարազատ հայրն եր հողի մշակի համար:

Յես այդ գգում ելի և սրանվ հեռանում, միանգանման հեռանում նրանից:

Հա՛, ներողություն, ընկեր պետ, նշանավոր մի խնդրի վրա կանգ չառա: Յերկրորդ տարում յես արդեն շփում ունելի հեղափոխական բանվորների հետ: Մեր փականագործարանում միքանի հոգի բայլշեկիներ կային: Ընդհատակյա աշխատանքի ծանր այն որերին շատ եմ նրանց համար գաղեթներ ու գրքեր թագցրել կամ փոխադրել: Ինձ վստահում ելին ու շատ սիրում:

Փետրվարյան հեղափոխությունից հետո բայլշեկիները յերբ նկուղներից առաջին հարկը

բարձրացան, յես սկսեցի կանոնավոր կերպով
հաճախել նրանց ժողովները:

Հորս ու մեր գյուղի հետ կապերս մշտա-
կան կտրված ելի համարում: Սակայն կատաղի
մի դժբախտություն վրա հասավ ու դրությունը
փոխեց: Տանլոթը թվի ամռանը, կռվի յեռուն
շրջանում, ու հիվանդությունը կծկեց ինձ, ան-
կողին նետեց: Բժիշկները հայտնեցին, վոր պետք
ե ողափոխություն կատարեմ: Նրանք խորհուրդ
տվին, վոր անպատճառ գնամ մեր գյուղը:

Ի՞նչ արած, պետք ե բժիշկների պահանջը
կատարելի: Ճիշտ յերեք տարի Բագվում մնալուց
հետո՝ ծանր հիվանդ. վոսկրացած ուղևորվեցի
գյուղ:

Չորս որ ճանապարհորդելուց հետո հասա
գյուղ:

Ծնողներս բավականին սիրալիր ընդունեցին
ինձ: Մայրս վզովս փաթաթվեց, թշերս, ճակատս,
աչերս պաչեց ու լաց յեղավ: Մոր սրտի հուզ-
մունքը միայն լացով ե հանգստանում: Հայրս
գլուխս գրկեց, ճակատս համբուրեց ու բարի գա-
լուստ ասեց: Վոչինչ, ջերմ ընդունելություն եր,
սակայն, լնկեր պետ, հենց առաջին վայրկանից
իմ ու հորս մեջ մի հսկա անդունդ նկատեցի:
Հայրս դեռ նույն մարդն եր՝ բարձր բոլով, հաստ,
փորը լիքը, փայուն վոսկեջրած գոտին կապած,

իշխան չուխան հագին, ճարպոտ աչերով, թավու յերկար բեղերով։ Յերեք տարում նա մազաշափ անզամ չեր փոխվել։ Այդ մարդու մեջ հարազատության չնչին նշուլ անզամ չգտա։

Շատ սրտասուշ լաց յեղա, յերբ իմացա, վորմիակ փոքրիկ յեղբայրս մահացել եւ։

Ուրեմն այս տան ոջախի ծուխը յես պիտք եւ շարունակեմ ծխել։ Վոչ մի դեպքում։

Յերկու շաբաթ չկարողացա աանից դուրս դալ. հիվանդությունս սաստկացել եր։ Փոքրից շատե լավանալուց հետո՝ հենց անկողնում պառկած՝ սկսեցի կարդալ. Բագվից բերածս գրքերից ելի կարդում. մեր պայքարին վերաբերող գլուքույներ։ Հայրս գիրք կարդալիս լսեթ ու չարագուշակ հայացքներ եր նետում զրքի վրա և փնթփնթում։ Մայրս մի որ հայտնեց, վոր հայրս նեղանում ե, թող դատարկ, ախմախ գրքեր չկարդամ. «Հորդ աչքից ընկնիլ մի», խրատեց մայրս։ Յես միայն ծիծաղեցի։ Մայրս նեղացած հեռացավ, ու նկատեցի, վոր գնալիս աչերը սրբում ե։ Ի՞նչ անեմ, կյանքի հզոր ալիքը նետեց ինձ այստեղ, տեսնենք՝ վաղը ինչ կլինի, մտածեցի ու զդացի, վոր իմ լացս ել ե գալիս։ Յերեսս փափուկ բարձի մեջ թաղեցի։

Անիծվիս դու, հիվանդություն...

Հիվանդությունս դարձյալ սաստկացավ ու

մի շաբաթ շարունակվեց։ Կըկին կազդուրվելուց
հետո յերբ մորս խնդրեցի, վոր գրքերիցս մեկը
բելի կարդամ, նա լաց յեղավ։ Ի՞նչ ե պատա-
հել... գրքերս...

— Գրքերդ ալրվել են, ալրվել, — պատասխա-
նեց մայրս։

Աչքերս մթնեց...

Սինուհետև, ընկեր պետ, մեկ ել-վոր ուշքի
յեկա, տասնութ թվի մալիս ամիսն եր. ութ ամիս
մերձիմահ պառկել ելին

Կազդուրվեցի ու տնից դուրս յեկա, դուրս-
յեկա գյուղամեջ, լույս աշխարհ... Թվում եր, թե
հենց ալդ ժամին բոլորովին նոր ե՝ մի յերկրից
եմ յեկել, վորաեղ այս գյուղին նմանող վոչինչ
չկա։ Մարդիկ հացի յեն նստում զինված, մեկը
մյուսի տուն ե գնում հրացանը ձեռքին, ամեն
տեղ զենք, բոլորը զինված։

Գլուղ դուրս յեկածս առաջին որը լսեցի,
վոր ոռւսական զորքերը բոլորը քաշվել են գնա-
ցել, տաճիկները հասել են մեզ, հայկական կա-
ռավարություն ե կազմակերպվում, ու բոլոր հա-
յերը դաշնակցական են գրվում։

Բալլակիկների մասին վոչ մի խոսք։

Մնացի շշմած։ Խորթ, միանգամայն ինձ
խորթ զգացի մինչև ատամները զինված դաշնա-
կցական ալդ մթնոլորտի մեջ։

Ներողություն, այժմ հորս մասին:

Փաստորեն սահմանապահություն ու մաքսանենգություն այլևս չկար: Հայրս զբաղվում եր առևտորով: Բայց ինչ առևտուր, բացարձակ թալան եր:

Ընկեր պետ, սով եր, զարհուրելի սով: Հայրս սովորականից բարձր գներով թղթադրամով ամեն որ, թեկուզ զրվանքաներով, հացահատիկ եր գնում, ամբարում: Յերկու մեծ ամբար ցորենով ու գարով լեցնելուց հետո վաճառել սկսեց: Խեղճ ու կրակ գյուղացուն կես փութ հացահատիկ եր տալիս ու մի գորգ, կարպետ, կամ լոթութ կտոր պղնձեղեն վերցնում: Յեվ դա համարվում եր առևտուր:

Հիվանդ, նիհար, անաշխատունակ ելի. տառապանքս ահոելի յեր: Հաճախ եր ջղայնությունս բռնում, վորոշում ելի թողնել, հեռանալ հորս տնից, վոր ինձ ոձի բուն եր թվում. սակայն ուժերս դավաճանում ելին: Վորքան ատում ելի հորս, վորովես հասարակական մի չարիքի, վոչ սլակաս ատում ելի և ինձ, վոր այդպիսի մի մարդու հաց եմ ուտում: Յեվ փոխանակ կազդուր վելու նիհարում, վոսկրանում ելի, սրտիս յեղած լուղը հալչում եր:

Որ չեր յինի, վոր յես ու հայրս չընդհարվենք: Նա վաղուց գիտեր իմ դավանանքի մա-

սին. դեռ յես Բագվում՝ նա լսել եր, վոր ազևս
իրենը չեմ:

Մեր լնտանիքում կյանքը վաղուց եր դառ-
նացել: Հորս ու մորս փոխհարաբերությունը վա-
տացել եր: Մայրս տղամարդու չափ զորեղ կամ-
քի տեր ու դործնական կին եր՝ անվախ, համար-
ձակ բնավորությամբ: Վերջին տարիներում հայ-
րս անբարոյական մի հատկություն ել եր ձեռք
բերել: Նա գիշերները գնում եր այս կամ այն
զինվորի միակ մնացած կնոջ դուռը ծեծում:
Գյուղում փսխում ելին, վոր նա միքանի կա-
նանց հետ հարաբերությունների մեջ ե:

Մայրս պահանջեց ամուսնուց, վոր նա գա-
զաթնակետին հասած անբարոյականությունը
թողնի, կամ բաժանվեն: Կնոջ սպառնալիքը հորս
միքիչ ուշքի բերեց, նա գիշերները դուռ ծեծե-
լը թողեց: Թողեց... դոնե մայրս չեր կարողա-
նում բռնել:

Ընկեր պետ, դե դուք յեղակացրեք, թե
նման պայմաններում վորքան ծանր հոգեկան
տանջանքներ կրած կլինեմ: Քաղաքական կյան-
քից կտրված լինելս ու մերոնցից տեղեկություն
չունենալս ուղղակի խեղդում ելին լինձ:

Ասում ելին, իբր թե Հայաստանի կառավա-
րություն ե կազմակերպվել, սակայն աչդ կառա-
վարության մասին մեր շրջանում գեթ չնչին գա-
ղափար չունեցին:

Հեղափոխությունը գլուղի հին վարչական կարգերը «փոխել» եր, բայց նոր կարգերը հնից ել խալտառակ ելին։ Ով ուժ ուներ, ով ձեռքին սուր ու հրացան ուներ, վոչ մի որենք չեր ճանաչում։

Սիրտս միայն միքիչ մխիթարվում եր նրանով, վոր կովի դաշտից վերադարձող զինվորները հեղափոխական տրամադրություն ելին գլուղ բերում։ Նրանցից շատերը հին պարտքի փոխարեն հորս ատրճանակ ելին ցուց տալիս։ Բայց կարիքը, սոսկալի կարիքը հորս միշտ հզոր եր պահում։

Կարիքի ճիրաններում թպրտացող գլուղը զարթոնքի մի ցնցում դործեց։

— Բայց ևի կները յեկել, մոտեցել են, ժողովը դիմին խաղաղություն ու կյանք են բերում... հողերի հավասարեցում... մահ հարուստներին, թալանչիներին.— ընկեր պետ, այս բոլորը միայն մի որում, միան մի առավոտ լսեցի։

Յերազումս հո չեմ, խսկապես մարդիկ ճիշտ են խոսում, բայց ևի կները, մերոնք մոտենանամ են, թե խոսողները փորձում են ինձ. գուցե համըս ես սովորեցրել։ Բայց չե, կարծես ճիշտ ե, շատերն են խոսում,— խոսում եմ ես յինձ հետ ու ականջներս սրում շատ բան լսելու։

Ովքե՞ր այսնշանաբանները նետեցին, անպատ-

ճառ՝ պրոպագանդիստներ են յեկել, յերևի մերսնք մոտեցել են... մոտեցել են, հոտը բուրում ե... մտածում եմ ու թևավորվում, ուրախանում:

«Ովքե՞ր են բայց նիկների մասին լուրեր բերել», հարցնում եմ հեղափոխական տրամադրություն ունեցող գյուղացիներին, սակայն դրական պատասխան չեմ ստանում:

Զգում եմ, վոր նրանք իմ մասին կասկածում են, ու այդ կասկածանքները ջիգարս դանակում են:

Վերջապես իմացա: Հայրս յերեկոյան սրտնեղած տուն յեկավ ու գանգատվեց: Յերեք որ առաջ, Զ... գավառից զինված յերկու հոգի գյուղ են դալիս, կոմիսսարին ներկայանում ու հավատացնում, վոր Նժդեհի զինվորներիցն են, յեկել են տեղի դիրքերին ծանոթանալու: Կոմիսսարը դրկաբաց ընդունում ե նրանց, հյուրասիրում, լավ պատվում ե, բայց վերջում պարզվում ե, վոր նրանք բայց նիկ լրտեսներ են, յեկել են վորսի Հենց վոր գաղտնիքը բացվում ե տղերքը ճղում են: — Ուրեմն անփորձ գնացել են, — ուրախացած հարցըի հորս:

— Այս, նրանք գնացել են, բայց նրանց կողմից կաշառվածներին պիտի մաշկենք:

«Մերոնք գալիս են», վորորաց սիրաս: Զարմանալի փոփոխություն, — յերակներումս արյան

ուժեղ հոսում զգացի, Գյուղը լերեմն պատվում
եր աչքիս ու մի տեսակ կարծիք գույն ընդունում:
Ուր են, ուշանում են...

Առաջին սրուղագանդիստների փախստից հետո
Մոշուտը փոթորկվեց: Ռազմաճակատը թրքա-
կան գյուղերի սահմաններից փոխադրվեց մեր
գյուղի սիրաը:

Գյուղը լարված, կրակի պատրաստ մի թշն-
դանոթի յեր նման, բավական եր, վոր մեկը ձգա-
նը քաշեր, խկույն վորոտը յերկինք կբարձրանար:

Ընկեր պետ, գուք պաքարում հասունացած
բայլշեիկ եք կարծում եմ, շատ լավ կհասկանաք,
թե ինչպիսի հոգեկան ապրումներ ունեցած կը
լինեմ այդ որերին:

Կյանքը և առողջությունը յերբեք ինձ հա-
մար այնքան թանգ չելին յեղել, վորքան գյու-
ղում բայլշեիկյան նշանաբանների տարածումից
հետո թանգացան:

Ուզում եմ ապրեմ, շուտ, շատ շուտ առող-
ջանամ, կազդուրիեմ, մեծ գործին պետքական
լինեմ:

Դաշնակցականները կասաղի պայքար սկսե-
ցին բայլշեիկների դեմ: Հազար գույնի ստեր ու
աղանդակություններ ելին պատմում մոտեցող
մերոնց մասին:

— Բայլշեիկ ասելով պետք ե հասկանալ գա-

զան, մարդակեր, — ասում եր զինված մի տերտեր...
Նիլոլ թագավորին ու նրա են նախշուն աղջիկ-
ներին բայց և ի կները մորթել են ու կերել. Բայց և ի կ-
ները անհավատ թուրքերից ել վատթար են:
կը ո՞չ, ավետարան, ժամ, պատարագ չեն ընդու-
նում, ասաված կտրի նրանց քոքը:

Դաշնակցականները կոչ ելին անում գյու-
ղացիներին, վոր մեծ ու փոքր, տղամարդ ու կին
կազմակերպվեն ու կռվեն բայց և ի կների դեմ:

Հակաբայլշեկիկան պաքարի ղեկավարներից
մեկն ել հայրս եր: Ի՞նչ ելի կարող անել քաղցր
պայքարի համար, — թուլ, վատառողջ, սիրոս ու-
զում եր պայթել: Մյուս կողմից ել, ընկեր պետ,
ջահելությունս եր ինձ խանգարում. ընդամենը
տասնիննը տարեկան ելի: Գյուղի միջավայրում,
դուք ել գիտեք, վոր ինձ նուան ջահելին քիչ են
մարդի տեղ դնում:

Վերջապես գյուղում յեռանդուն աշխատող
բայց և ի կների բունը գտա. նրանք ութ հոգի ելին.
միքանիսը (ղեկավարները) Բագվից վերադար-
ձած բանվորներ ելին, իսկ մյուսները հինգ-վեց
տարով զինվորության մեջ գտած չքավոր գյու-
ղացիներ:

Սկզբում նրանք ինձ չելին հավատում, խու-
սափում ելին, տանջվում, վոր մի կերպ ձեռքիցս
ազատվեն: Ցեվ նրանք լավ ելին անում: Հավա-

տալու բան չեր, վոր հորս նման հարուստի
տղան սպնիվ բայլշեկիկ կլինի, Բայց գործով համոզեցի նրանց, վոր իսկապես նվիրված եմ: Ընկեր պետ, շատ ե յերկարում բացատրությունս, բայց հսար չկա, պետք ե գըեմ, ուզում եմ պատմել, թե ընկերներին ինչով հավատացըի, վոր յես հավատարիմ եմ իրենց: Դա կատարյալ մի հաջողություն եր ինձ համար, քաղաքական աշխատանքիս առաջին քաղցր պտուղը, մի պտուղ, վորի համը յերբեք չեմ մոռանա:

Դեպքն այսպես պատահեց:

Սրտատրով սպասում ելինք Ռուսաստանից յեկած մի բայլշեկիկ ընկեր տեսնել, վորն ավելի կվոգեորեր մեզ. սպասում ելինք, բայց նրանք ուշանում ելին:

Հայրս ձեռքերն արնի մեջ շաղախած գործում եր. նա տեղեկություն չուներ, վոր յես, մերոնց հետ կապված, գործում եմ:

Կան մեկ թվի հունվարի վերջերին, ցուրտ, բքաշունչ մի որ, իրիկնաղեմին, չորս յերիտասարդ տղամարդ ու մի կին կապոտած բերին ու մեր գոմում բանտարկեցին, վորպես ապահով տեղ: Հայրս գոմի բանալին գրպանումը յերեկոյան պառկեց քնելու: Ի՞նչ անել, ի՞նչպես ազատել ընկերներին. վաղը նրանց անպատճառ կրգնդականարեն... մտածում եմ ու խելագարու-

թիան չափ ինձ կորցրած, ջղայնությունիցս մատ-
ներս կըծում:

Տեղական ընկերները մի շշուկով հայսնեցին,
թե վորոշված ե ձերբակալվածներին ազատել, ու
գործը հանձնարարվում ե ինձ, սեփական արյան-
գնով պետք ե փրկել նրանց:

Յեթե մինչև լուսաբաց չկարողացա ազատել
նրանց, ինքնասպանություն կգործեմ— վորոշեցի
լես.

Յերկար մտածելուց, տառապելուց հետո
պայծառ մի հիշողություն ուղեղս լուսավորեց:
Փոքրիկ, դեռ յոթ-ութ տարեկան եղի, վոր մեր
գոմը շինվեց. յերկու դուռ ուներ... մեկը դեպի
մեր տան կողմն եր նայում, վորը ալժմ ել մնում
ե, մյուսը բացված եր յետեկի կողմից՝ դեպի ձորը:
Հենց առաջին տարին ձմեռը, ձորի կողմի դռնից
յեզները դուրս դալու միջոցին մեկը մյուսին հրե-
ցին ու թոլ յեղան, սատկեցին: Հայրս այդ
դուռը փակել տվեց: Այն, շատ լավ եմ հիշում,
կրապատ չե, հենց հասարակ ցեխապատով ե շին-
ված այդ դուռը, հեշտ կըանդվի:

Հայրս հենց վոր քնեց, մորս յեղելությունը
պատմեցի և խնդրեցի, վոր ողնի: Մերժեց նա:
Հավատացրի, վոր ինքնասպանություն կգործեմ,
յեթե բանտարկվածները չազատվեն այս դիշեր:
— Յես միայն հորդ կհետեւիմ, ինչ ուզում

ես, արա,—ասեց մայրս։ Ուրախությունիցս վա-
թաթվեցի մորս, ճակատը պաշեցի ու տնից դուրս
լեկա։

Մութ լերեկո լեր, ամպերը լերկնքում թա-
ռած։

Միքանի վայրկյան գոմի չորս կողմը շրջեցի,
հեռվից դիտեցի մեջքը դռանը դեմ տված, ննջող
պահակին ու բանը ձեռքիս անցա գոմի լետելը։

Կես ժամ տեսեց, մինչև գոմի դռւուը կիսա-
չափ քանդեցի և ներս մտա։

Ներս մտա և իսկույն նրանց կապանքները
արձակեցի։ Բոլոր ընկերների հետ համբուրվեցի։
Ժամանակը շատ եր թանգ, գոմում խոսելը վտան-
գավոր եր։ Նրանց գոմից դուրս տարա և ցուց
տվի փախչելու համար հաջող մի ճամպա։

Խափարը ցանկալի լեր այդ գիշեր։ Նրանք
կրկին համբուրվեցին ինձ հետ ու մտան գյուղի
միջև հոսող գետի հունը։

Յես դարձա տուն։

Մյուս որը գյուղը դրդաց։ Բոլոր կասկա-
ծելի մարդիկ (թվով տասնչորս հողի) ձերբակալ-
վեցին։ Յել զարմանալին այն ե, վոր մեր գործող
ընկերներից վոչ մեկը չձերբակալվեց։ Մերոնք
աշխատում ելին վերին աստիճանի գգուշ։ ձեր-
բակալվածները գյուղի լերիտասարդության այն
տարրերն ելին, վոր ժողովներում կամ գանազան

զրուցների ժամանակ բայց և կական մտքեր ելին
արտահայտում, սակայն գործնական աշխատանք
յերբեք:

Զանազան վկայությունների միջոցով հաս-
տատվեց, վոր ձերբակալվածները մեղավոր չեն,
ու կրկին ազատ արձակվեցին:

Իսկ ով ե գոմը քանդողը: Այս հարցը բոլո-
րի համար անհայտ եր, անլուծելի, բացի հորիցս:

— Շան կաթը ծծած, վրաց ես են գողերին
փախցրել, կաշիդ կմաշկեմ.— դեպքի չորրորդ յե-
րեկոյան տուն մտնելուն պես, վոտը գետնին
զարկելով բղավեց հայրս:

Լոեցի:

— Հարկավոր ե նրանցի փոխարեն քո գլու-
խը կտրել, — կրկին վորոտաց հորս ձախը:

Նա մոտեցավ, վոր ինձ ապտակի, յես իսկույն
վրա հասա և տան մեջտեղում սլունից կախած
հրացանը բռնեցի:

Հայրս մոնչաց ու հեռացավ:

Ըսկեր պետ, խնդրում եմ չձանձրանաք:
Թվածս յերեսուլթներն են, վոր կազմակերպել են
իմ հոգեբանությունը. նրանք են, վոր փորել են
հոր ու վորդու միջև յեղած հսկա անդունդը, մի
անդունդ, վորը միայն բացառիկ դեպքերում ե
ստեղծվում:

Ի՞նչպիսի հոյակապ անդունդ...

Հայրս վերջնականապես համոզվեց, վոր լես
հակառակորդ բանակից վերադարձողը չեմ։ Հինգ
բայց եկիների փախուստը, վորն, ինչպես տեսաք,
լես ելի կազմակերպել, նա հրապարակ չհանեց.
սակայն ինձ ճնշելու համար միշտ սպառնում եր։
Ով եր նրա սպառնումից ահ զգացողը։ Մահը
քաղցը ե, լերբ սիրածդ գործի համար ես զոհ-
վում. ծիծաղելով լերբ պատասխանում ելի հորս
սպառնալիքին, թե պատրաստ եմ մեռնելու, նա
բարկանում եր, կատաղում, հաստ պողոշներն ա-
տամների տակ քաշում կրծութում։

— Լակոտ, դոնե լոի, բարկացնում ես, վոր
ոջախիս ալունն իմ ձեռքով կտրեմ…

Մայրս փեշ քաշելով մի կերպ ինձ դուրս
եր բերում տնից։

Մեր ընկերներից լերկուսն անհետացան,
պարզ ասած՝ հակառակորդները գողացան։

Սուածին հարվածը ուժեղ եր. գողացվածները
դեկավար ընկերներն ելին։ Հենց նույն որը ստույգ
աղբյուրներից իմացա, վոր հայրս տեղբակ չեր
լեղել այդ վոճրագործությանը։ Ի՞նչ եք կարծում,
լես նրան վողջ կթողնելի։

Կովի այդ լեռուն շրջանում վոգեորումից
առողջությունս համարյա թե վերականգնեց, բա-
վականին առուցի ելի զգում ինձ։

Միքանի ընկերների հետ անցանք մերոնց

կողմն ու յերկու ամսից հետո մի վաշտ կարմիր-
բանակալիններով հաղթական մտանք գլուղ:

Մեր սրտերի պես յեռուն, կարմիր գարնան
մի նախշուն որ եր այդ:

Բանակալին ընկերներից մի ջոկ տարա մեր
տուն:

Հայրս հիվանդ, անկողնում պառկած եր:
Հորս ընկերները դեպի Պարսկաստան փախուս-
տի միջոցին ուզել ելին նրան ել տանել, բայց
նա չեր համաձայնվել. «Թող մնամ ու գլուխս իմ
ոջախի սալին դրած մեռնեմ», ասել եր նա:

Գլուղի նոր կազմած հեղափոխական խոր-
հուրդը գործում եր: Հեղկոմի կազմակերպման
հենց առաջին որը բռնագրավեց ուներների
մոտ յեղած հացահատիկն ու բաժանվեց սո-
վամահության մատնված չքավորներին: Հորս ամ-
բարների դռներն իմ ձեռքով բաց արեցի և ցո-
րենը բաժանեցի: Հայրս ականջներն ու աչքերը
փակում եր, վոր վոչինչ չտեսնի ու վոչինչ չլսի:

Յերեկոները, յերբ հասարակական աշխա-
տանքներից դառնում ելի տուն, հայրս իսկուն
և հայնուանքի տոպղակը բացում եր: Նա հայ-
նոյում եր բալլարիկներին, վոր յեկան իրեն «հա-
լալ բըտինքով» ձեռք բերած հարստությունը
խլեցին ու տվին աղքատներին:

Լուռ սպասում ելի, մինչև վոր նա վերջաց-
նում եր հայնոյանքները:

— Հը՛, Հակոբ դալի (հորս բարկացնելու
համար Հակոբ դալի ելի կանչում), ուշունցդ
վերջացրի՛ր. շատ լավ, դե մեկն ել յես ասեմ՝ դու
լոիր:

— Անիծվի քեզ նման... բոյըդ թաղ... եղուց
չըլնի, միուս որը կըլնի. «աման-բալասիթը» պետք
ա վերադառնան ու բոլորիդ շան նման մորթո-
տեն, — ձեռքերը վեր բարձրացնելով ասում եր
հայրս ու դրան ավելացնում.

— Շուն շան... տնիցս կորի...

Մալրս հորս պաշտպանում եր:

Ու նրան սիրտ եր տալիս՝ «Համբերի, սրանք
միքանի որվա ղոնաղներ են»:

Տանն ինձ համար ամեն բան խորթ եր, ո-
տարութի:

Հորս տան ծանը ողը տանել չկարողացա-
չենց խորհրդանացման առաջին տարին ամռա-
նը մշտապես հրաժեշտ տվի գլուղին: Ուղիղ
մի տարի քաղաքում լերկաթուղարին բանվորելին:
Որերս շատ ուրախ ելին անցնում, հասարակա-
կան աշխատանքներով բեռնված աշխատում ելի:

Հաջորդ տարին, աշնանը կանչեցին ինձ բա-
նակ: Յերկու տարի բանակումն եմ: Բանակում
վարած կյանքիս մասին չեմ խոսի. դուք ինձնից
լավ եք ծանոթ մեր կյանքին: Ամբողջ լերեք ու կես

տարի հորս հետ վոչ մի հարաբերություն չեմ
ունեցել։ Այս տարի գարնանը, վորպես սահմա-
նապահ կարմիր-բանակալին ուղարկեցին ինձ
Մոշուտի պարետալին շրջանը, Մեր զորանոցը
գլուղից դուրս ե, գիտեք դուք։

Հորս մի որ հանգիպեցի և չկարողացա
խուսափել։ Նա ճակատու համբուրեց ու լաց լե-
զավ։ Մինչև այստեղ գալը չդիտելի, թե հայրս
ինչով ե զբաղվում։

Բայց չելի լել կարծում, վոր նա խաղաղ
հողագործ դառած կլինի։

Մեր սահմանապահ ընկերներից մեկը, չի-
մանալով, վոր մոշուտցի Հակոբ Բոխյանն իմ
հայրն ե, մի որ նրան ցուց տվեց ինձ ու ա-
տամները կրծտացնելով ասեց։

— Բոխյան, տեսնում ես են քավթառ գե-
լին։ մեր շրջանի անենախորամանկ մաքսանենդը
նա լե, եղ սատանին բռնել չի լինում։ Այս, թե
մի անգամ ճանկս կընկնես՝ հախիցդ կգամ, Արա-
գի մեջ կթողնեմ։

Յես կարմրատակեցի ու սկսեցի դողալ։

Միթե հայրս ելի մաքսանենդ ե, գող, ա-
վազակ, անբարուական, նույնիսկ իր բավական
ծեր հասակում։

— Գրո, ի՞նչ պատահեց, դողում ես,— զար-
մացած հարցրեց ընկերս։

— Վոչինչ, — պատասխանեցի նրան:

Ամոթն ու նախատինքը խեղդում ելին ինձ:
Ամաչում ելի ընկերներիս շրջանում խոսել,
հայտնել, վոր այդ խորամանկ մաքսանենզը հայ-
ըըս եւ

Մի շաբաթ առաջ մի դիմումով խնդրեցի
զորամասի պետին, վոր ինձ փոխադրի ուրիշ
շրջան: Դեռ դիմումիս պատասխանը չեկած, հո-
րիցս նամակ ստացա. խնդրում եր ինձ տուն
գնալ, գրում եր, վոր հիվանդ եւ:

Յես տատանվում ելի. գնալ թե չգնալ. Վեր-
ջապես շրջանի պարետից թուլլափություն խընդ-
րեցի և գնացի:

Հայրս հիվանդ չեր. Նա կանչելու պատճառ
համարում եր այն, վոր կարոտել ե ինձ, և շատ
սիրալիս կերպով ընդունեց: Զգում ելի, վոր նա
կեղծում եւ:

Ճաշի նստեցինք: Նա խոսք բաց արավ իմ
ժառայության մասին: Նկատում ելի, վոր ամեն
կերպ նա աշխատում եր խոսք դուրս քաշել ինձ-
նից, թե գիշերը վոր ժամին, վորտեղ ինչ պա-
հակներ են կանգնում, ինչ պայմաններում եմ
յես սահմանապահ լինում:

Անպես ձևացրի ինձ, վոր իբր թե վոչինչ
չհասկացա, ու անորոշ պատասխաններ տվի:

Ճաշից հետո ձիս նստեցի և շուտ-շուտ հե-
ռացա ինձ տանջող այդ տնից:

Աստղագարդ սիրուն գիշեր եր։ Ա փոստի
շրջանում, մենակ, հրացանը ձեռիս, մտազբադ
շրջում ելի։ Ականջս ձենի յեր, սիրտս՝ անհան-
գիստ։

Շրջում ելի, մտածում ու տանջվում։ Ի՞նչ
սոսկալի արատ ե։ Թվում եր, թե մաքսանենզը-
յես ինքս ելի։ Կարմիր բանակն ի՞նչպես ե մեզ
կըթում, ամոթ չե, վոր դավաճանում եմ։

Ի՞նչ կլիներ իմ դրությունը, յեթե ընկեր-
ներս իմանալին։

Մտածում ելի ու ցնցվում։

Արազը կատաղի մոնչում եր և հաղթանիստ
ժայռերի փեշերը լիզերով առաջ եր սոսկում։
Լուսնյակի վոսկելուս շողերն ընկել ելին փրփը-
րաբերան գետի ջրերին ու սիրուն փայլիեց-
նում ելին նրան։

Գետաբերանով անշշուկ քալլում ելի։ Հոգիս
ժայռոտ ձորով սրընթացող Արազի նման ալեկոծ-
վում եր։ Շուտով հասա այն կետին, ուր գետի
հունը լախանում եր, դանդաղում, և ջրերը խա-
ղաղվում ու լռում։ Ականջիս ինչ-վոր շշուկ հա-
սավ։ Նայում եմ լուսնի լուսի տակ, գետի մեջ
յերկու թե յերեք սև ստվերներ են յերեւում, վո-
րոնք դանդաղ անցնում ելին դեպի մեր ափը։

Լարված նայում եմ ստվերներին։ Ահա նրանք
յերկու ձիավորներ մոաեցան մեր ափին։

— Մրկեր եք, կանգնեցեք, — վորոտաձայն
գոռացի լես:

Նրանք կանգ չառան: Յեվ ականջիս հասավ
մի ծանոթ ձայն:

— Գրո ջան, անցիր, մի կանգնիր, մենք
ենք:

— Ի՞նչ,—մռնչացի լես, — ալդ դու լես, հա.
ինչի՞ տեղ ես դրել ինձ...—և առանց յերկար ու բա-
րակ մտածելու հրացանն ուղղեցի հենց ալդ ձեն
տվողի վրա:

Հրացանի վորոտի հետ սրտից դուրս թռավ
ինձ տանջող ցավը և կուրծքութեթևացավ:

Ներեցեք, ընկեր պետ, վոր բացատրությունս
ձգձգված եր. ընդհանուր դրությունը ձեզ պար-
զելու համար ազ կերպ չելի կարող գրել:

Ա սահմանապահ զինվոր՝ ԳՐՈ ԲՈԽՑԱՆ

Պետը ծալեց զեկուցագիրը, լախ ներս քա-
շեց ծխամորճից ծուխը և կարծես թե մարդ
վնտուելու ցանկությամբ ժպտացող հալացքներ
շրջեց դես ու դեն, բայց վոչվոքի չգտավ:

— Պեաք ե կանչել Գրովին, հարկավոր ե նրան
պարզեատրել իր ազնիվ ծառալության համար.—
շշնջաց նա ինքն իրեն ու մատը դրեց սեղանի
վրա դրված զանգակի կոճակին:

ՍԱՀՄԱՆԱԳԼԻՒԽՆ.

1.

Ամռան իրիկնալին բաց-կապույտ մութը
հետզհետե թանձրանում եր ու ծածկում արագա-
վագ Արագի ժեռոտ ափերը։ Արագին զուգահեռ
ձգված քարքարոտ կածանով նրանք շտապում
ելին դեպի Որդուքաթ։ Յերկու հոգի ելին։ Մեկը՝
հազիվ քսանն անցած, հասարակ, սև հագուս-
տով յերիտասարդ եր, թովուուն, կապտախալ ձին
նստած։ Իսկ մյուսը՝ հասակն առած, անխնամ
միրուքով գյուղացի, ջորու վրա, մոթալ փափա-
խի տակ կուչ յեկած։ Նրանք լուռ ելին։ Միան
կյուղացին ծանր շնչելով, յերբեմն կրնկով բո-
թում եր ջորու կողքին ու քթի տակ յերգում։

Ախ, մեկ ել յեկ, ջահելություն,
Զան, մեկ ել յեկ, ջահելություն...

Յերիտասարդը ալեղարդ ուղեկցին համարյա-
թե ուշադրություն չեր դարձնում։ Ինչպես յե-
րեսում եր, նա առաջին անգամն եր այդ ձորով
գնում։ Զիու սանձը բաց թողած, հափշտակված,
նայում եր բնակերտ զեղատեսիլ ժայռերին, քա-

բանձավերին, խորխորատներին ու մոնչացող գետի վեր ու վար անող փրփրոտ ալիքներին։

Նրանք հասան փոքրիկ հովտանման մի տարածության։ Ահա և յերեք հարկանի մի շենք յերևաց։ Կարճեանի փոստն եր։ Փոստին դեռ չհասած՝ շների մի վումակ նրանց շրջապատեց։ Գրաստները մնացին շների ողակում, առաջ չելին շարժվում, միայն վեր ու վար ելին անում յետի վոտքերի վրա ու փնչացնում։ Ի՞նչ անել, ուր գնալ, մտածում եր յերիտասարդ ճամպորդն ու մի կերպ իրեն ձիու վրա պահում։ Քիչ եր մնում ատրճանակի դիմեր, բայց սահմանագլուխ ե, չլ կարելի։

— Վարդան ապեր, մեզ կպատառոտեն, — յերիտասարդը հուսահատորեն դիմեց ուղեկցին, — պետք ե յելք գտնել։

— Միշա ջան, վախիլ մի, հիմա կգան, — բոլորովին անտարբեր, ժպտախառը պատասխանեց Վարդան ապերը։

Մի սուլոց բարձրացավ։ Սուլոցից կատաղի շները մի վայրկյանում խաղաղվեցին, յետ դարձան։ Ուղևորներին մոտեցան սվինավոր հնացան-ներով սահմանապահ յերկու զինվորներ։ Զինվորները հարցըին նրանց ովլ լինելը ու քայլ արին, վոր գնան։ Վարդան ապերը ձայն տվեց։

— Հսկերներ, ընկերներ, համեցեք պապի-

ըսու, —ու ծխախոտի տուփը մելնեց կտրմիր-բառ-նակալիններին։ Բանակալինները ժպտալով շնորհակալություն հայտնեցին ու մի-մի գլանակ վերցրին։

Զինվորները գնացին։ Մինչև անհետանալը՝ մոթալափափախ գլուղացին նայում եր նրանց լետեկից ու սիրալիր ժպտում։ Նրա դալուկ աչերի ժպիտն այնքան անուշ եր թվում։

2.

Ուղևորները փոքրիկ հովիտն անցան ու կրկին մտան սեպաձև ժայռերի փեշերով ձգված կածանը։ Նրանք դարձյալ լուռ ելին։ Միայն Արագն եր բարձրագոչ վորոտում։

Ցերիտասարդ ուղևորը չեր նկատում, վորընկերը հուզված ե, սրտնեղած։

— Այս, յերանի, հազար յերանի հիմիկվա ջահեններին, — ձախը դողալով, ջորու վրայից դեպի յերիտասարդը թեքվելով ասեց Վարդան ապերը։

«Տարորինակ մարդ, յերեկի սիրտն ուզում ենորից ջահելանալ», մտածեց Միշան ու ծիծաղելով հարցըեց։

— Վարդան ապեր, չինի՞ թե նոր ջահելանալու ցանկություն ունես։

— Բա, Միշա ջան, ջահելանալու սիրտ ու-

նեմ, համա... Ո՞հ, ես կարմիր աստղավոր զինվորներին վոր տեսնում եմ, ուրախությունից քիչ ե մնում լաց ըլեմ:

Յերիտասարդին, թվաց, թե Վարդան ապերը միայն բանակ գնալու, կարմիր զինվոր դառնալու համար ե, վոր ցանկանում ե ջահել լինել: Նրա նախանձը շարժելու համար ասեց.

— Քեռի, աշնանը լես պիտի գնամ բանակ, ափսոս, վոր դու...

Ու վոչ մի շշուկ չբարձրացավ: Միշան կարծում եր, թե Վարդան ապերը կասի, թե՝ բալաջան, մի շաբաթ չկա գալդ, բա վոր դու գնացիր, շրջանի կոմսոմոլն ով կղեկավարի: Սակայն գյուղացին վոչ մի խոսք չպատասխանեց:

Անցան լուռ ու խորհրդավոր ըռպեներ:

— Կուզես, ես ճամպի և իմ մասին քեզ մի փոքրիկ, բայց դժբախտ դեպք պատմեմ, — լուռթյունը խզելով դյուղացին դիմեց իր ճամպորդ ընկերոջը:

— Խնդրեմ, ճամպան յերկար ե, — պատասխանեց յերիտասարդը:

Վարդան ապերը կոկորդը մաքրեց:

— Ուղիղ յերեսուն հինգ տարի առաջ եր: Բեղերս նոր ծլած, քու հասակին, ուժեղ ու սըրտոտ մի յերիտասարդ ելի: Մեր գյուղերի առետրական կապն Որդուբաթի հետ եր: Միշտ գնում-

կալիս ելինք ես ճամպով։ Խուս թագավորի սար-
դաթները շատ ելին նեղում գեղացիներին։ Եհ,
ով եր նրանց սանձը բաշողը։ Գեղացիներին թա-
լանում ելին ու մեծավորներին հայտնում, թե՝
կանտրաբանդներ ենք բռնել։ Ասենք ամեն ինչ կա-
տարվում եր մեծավորների գիտությամբ, և խեղճ
գեղացիներին հանցավորի անվան տակ տարինե-
րով բանտում տանջում ելին։ Միշա ջան, պար-
ծենում չեմ, քու արել վկա, սիրտս են քերծի
չափ մեծ եր։ Մտաղրվել ելի մի անգամ մեծա-
վորներից մեկին բռնել ու ծեծել։ Հետևանքների
մասին ով եր մտածում։ Ո՞ս անիծվեն նրանք։
Մի տարի յեր, ինչ նշանված ելի։ Հարսնացուա
տանութ տարեկան, կուսաբեր անունով, հուրի-
մալաք մի աղջիկ եր։ Բոլով ու բուսաթով եր նա,
յերկար շեկ ծամերով։ Մի տարվա ընթացքում
միայն մի անգամ ելինք պաշվել, են ել զուռ-
ռուռով։

Վերջին բառը արտասանելիս Վարդան ապոր
ձայնը դողաց, լեզուն կապվեց։ Ժայռի ճեղքած-
քով հոսող ջրերի խուլ քլքլոցի նման վշտահըն-
չուն մի ձայն բարձրացավ Միշալի ականջի մոտ։

«Այն, նա լաց ե լինում, —մտածեց Միշան։ —
միթե մի համբուլիրի վերհիշման համար։ Վոչ, ըստ
յերևութին ուղեկցիս սիրտը դաղված ե»։

— Հետո, Վարդան ապեր, հետո։ մի հուզ-
վիր, պատմիր։

— Պատմեմ, բալաս, պատմեմ, — ձանը դու
դալեն պատասխանեց ջորու վրա կծկված ծե-
րունին:

Ու միքանի վայրկան հանգստանալուց հե-
տո շարունակեց.

— Հարսանիքի պատրաստություն ելինք
տեսնում: Վարդավառից մի շաբաթ առաջ, կի-
րակի յերեկոյան՝ քառասուն մանեթ փող՝ վեր-
ցըրի ձի նստեցի և քշեցի դեպի Որդուբաթ:
Գնում ելի ճոթ ու կտորեղեն առնեմ: Հա, եդ
որն եր, վոր Լուսաբերիս հետ համբուրվեցի: Այս,
վերջինն յեղավ: Մամերը մեջքովը փռած, թռվա-
լով, իրենդ բաղչիցը նա տուն եր գնում: Հենց
վոր տեսավ ինձ՝ ձին նստած, տեղն ու տեղը
մեխվեց. Ֆնաց կանգնած: Հասա նրան, ձիուցն
իջա ու ձեռքը բռնեցի: Լուսաբերս դողում եր.
Նրա գլուխը գիրկս առա ու պաշեցի նրա թու-
շը: Նա փաթաթվեց վզովս: Մեկ ել վախեցած
յետ քաշվեց ու ասեց.

— Գնա:

Զիս նստեցի:

Մի անգամ ել վորձեցի ձիու վրայից պաշել.
Հեղավ, կխտարի նման առաջից փախավ: Տխուր.
Նա շատ տիսուր եր յերեսում: Յես հեռացել, ահա-
գին տեղ ելի անցել, նա դեռ թթւնու տակ մեխ-
ված նալում եր ինձ... Ափսոս, ափսոս ջահելու-

թիուն։ Զահելութիունից ել քաղցր բան։ Յերեկո
յեր, մութ, չարքերով լի մի յերեկո։ Դեռ չելի
հասել մեր նոր անցած պոստին, յերբ յերեք սալ-
դաթ առաջս կտրեցին ու հրամայեցին, վոր ձիուցս
իջնեմ։ Ասեցին՝ պիտի գնանք մեծի մոտ, վոր
քո ով լինելն ստուգենք, մաքուր մարդն ես ժա-
մանակ ճամպա չի գնաւ։

Թրպանումս պասպորտ ունեցի, սիրտս հան-
գիստ եր. կարծում եմ, վոր յեթե պասպորտը
նշանց տամ, բաց կթողնեն։ Ասեցի՝ գնանք։ Զհա-
կառակվեցի։

Գնացինք մեծի մոտ։

Քարաշեն ոթախում, ճրագի լուսի տակ
կռացած, շողշողուն սլաղոններով միրուքավոր
մեկը գիր եր գրում։ Սալդաթները ոռւսերեն ինչ-
վոր բաներ ասին։ Նա հրամայեց, վոր ինձ կա-
պեն։ Ահը սիրտս ընկավ. Պասպորտս հանեցի ու
են նստածի քթին դեմ արեցի։ Զար գելի պըլ-
պլան աչքերով մտիկ տվից ու հրամայեց, վոր ինձ
խուզարկեն։ Քառասուն մանեթս հանեցին։ «Ան-
պատճառ Պարսկաստան փախչող ա, — ասեց մի-
րուքավորը, — պետք ա կապել»։ Սալդաթները փոր-
ձեցին վոր կապեն. չդիմացա, նրանց յետ տվի
ու մեծին խնդրեցի, վոր ինձ բաց թողան։ Ասի,
վոր նշանված եմ, գնում եմ հարսանիքի համար
կտորեղեն գնելու։ Մեծն ավելի բարկացավ ու

յերեսիս թքեց։ Ել համբերելու տեղը չեր, աչ-
քերս արյունավլ լցիւցին։ Սալղաթները յերկրորդ
անգամ մոտեցան, վորթևերս կապուտեն. գժվածի
պես յերկու սալղաթին ել անպես քացի տվի,
վոր մեջբների վրա զետին լնկան։ Մեծնուզեց
մոտենալ, նրան ել յետ շպրտեցի։ Ու մեկ ել, մի
գոռոց լսվեց։ Մի բան աջ ուսս ծակեց։ Վի-
րավոր, թևս ջարդված, ինձ տեղափոխեցին ու-
եղդի կենտրոնը և վորպես կանդրաբանդիստի
չորս տարով քշեցին աքսոր։ Մաղ գեղը վկայում
եր իմ ով լինելու մասին, բայց դատարանը դող,
ավազակ մի պագոնավորի ասածը բոլորից բարձր
գնահատեց։

Աքսորում քաշած կյանքի մասին բան չեմ
պատմի։ Բայց այնքան հիշողություններ ունեմ
Արխանգելսկ քաղաքից։ Միքանի հոգար աքսորա-
կանների մեջ միակ հայն ելի։ Անասունի նման
չորս տարի տանջվեցի։ Լեզու չելի գիտում, ան-
կիրթ մարդ, ով հասնում եր, հրում եր։ Ցեվ
յերբ չորս տարին լրանալուց հետո վերադարձա,
Լուսաբերիս գերեզմանի վրա խոտ եր բուսել։
Խեղճ աղջիկը դարդի ձեռից հիվանդացել եր ու
ցավին չղիմանալով՝ մեռել։ Միրտս փշրվեց։

Միշան նկատեց, վոր Վարդան ապոր ձախն
ելի դողում եւ։

-- Ինձ մարդասպանի պես ելի զգում։ Զե՞-

վոր յես յեղա են թառլան, թռվռան Լուսաբերի
մահվան պատճառը: Դիշեր-ցերեկ արցունքն աչ-
քերիցս չեր ցամաքում: Ախր նա ինձ շատ սի-
րելուց եր դարդու դարձելու մեռել: Ի՞նչ անեմ,
վոր սևերես չմնամ նրա մոտ, մտածում ելի և մի
յելք վնտում: Իմ ջահել հասակում, հող դառած
Լուսաբերին հավատարին մնալու համար, վորո-
շեցի ել չպսակվել: Կարծում ելի, թե Լուսաբերի
համը հեչ մի կին չի ունենա:

— Վարդան ապեր, բա մեն-մենակ ես ապ-
րում, անժառանգ,—զարմանքով հարցը Մի-
շան, —իսկ ով եր ալդ յերիտասադրը, վոր մեզ
հետ մինչև գյուղի ծալըն յեկավ. յես կարծում
ելի, թե նա ձեր վորդին եր:

— Ինչու պետք ե մեն-մենակ ապրեմ,
կամ ինչու պետք ե անժառանգ լինեմ, ամեն
ինչ ել ունեմ, —բոլորովին լուրջ պատասխանեց
Վարդան ապերը:

— Բայց ասեցիր, վոր չես ամուսնացել,
Լուսաբերից հետո վոչ մի կին....

— Զեմ ամուսնացել, ճիշտ ա, համա տղա
յել ունեմ, հարս ել: Են լեն ճակատով տղեն
հեռու յերկը յեկած կարմիր-բանակալին ա,
ես ճամպին եմ նրա հետ ծանոթացել ու զորա-
ցըրվելուց հետո բերել, իմ տղան դարձրել: Հարա-
զատ վորդին ինչ ա, վոր իմ Լկոնի համը տա:

Իմ Հայոնը կամուռիստ ա. դու դեռ նոր ես. վոր
ծանոթացար՝ շատ կհավանես, նա լել եր քիչ ա-
ռաջ մեզ հանդիպած զինվորների նման խելոք.
վժնց չսիրեմ. .

Միշան հիացած՝ Վարդան ապօրը լսում եր:
Նա կիսամութի մեջ հրճվանքով նայեց ալեհեր
գլուղացու դեմքին ու ժպտալով ասաց.

— Վարդան ապեր, շարունակիր:

— Հա, վորդի ջան, շարունակեմ: Յերեսուն
տարի անցավ: Տխուը ու ջան մաշող տարիներ
ենին: Յերեսուն տարի եղ ճամպովը չանցա. թա-
գավորական սալդաթների յերեսը տեսնել չելի
ուզում: Մի որ ել լուր յեկավ, թե նիկոլին թախ-
թից գցել են: Դրանից դեսը յերկիրն ալան-թա-
լան դարձավ: Որդուբաթի ճանալեն արնով շա-
ղախվեց: Վոչ թե յես, թոշունն անգամ ես ճամ-
պին թամաշ անեյիս դոդում եր: Արյան հոտը
մարդ եր խեղդում: Վորդի ջան, գլխիս մազերն
սպիտակեցին: Մահն ել քոռացել եր, մեր շեմ-
քով ներս չեր մտնում:

Բայց կիկների մասին վոչ մի բան չգիտելինք:
Վոր ասում ենին — կարմիր զինվոր, կարծում ելի,
թե դրանք ուղղակի կարմիր են: Նրանց տեսնե-
լու համար սիրառ գնում եր: Սրտիս յարեն թա-
գանում եր: Շատ ելի ցանկանում նոր զինվորներին
տեսնել, նրանց խասլաթն իմանալ: Եղ ել կատար-

վեց։ Կարմիրները յերբ նոր ելին գրաւղ մտել,
Ռեվկոմի նախագահը յերկու զինվոր տվեց, վոր
մի շարաթով մեր տանը պահենք։ Հավատում ես,
թե չե, ես մարդիկ ուղղակի խելքս տարան։ Ամբողջ
որը բայց իմական զրեր ելին կարդում ու մեղ
հասկացնում։ «Ափսոս, վոր ծեր ես, քեզ ել բայց
շեմիկ կդարձնելինք», ասում ելին նրանք, իսկ
յես, հավատացիր, ուղղակի շնկվել ելի։ Դրանից
հետո յերեսուն տարվա փակ ճամպաս բացվեց։

Միքանի տարի յե, ինչ ամիս չի լինի, վոր
յես ես ճամպով չանցնեմ, Ու ամեն անգամ, յերբ
եդ սրածեր փափախով զինվորները հանդիպում
են ինձ, շատ սիրով են դեմս գալիս ու շներին
քշում, և սիրաս մի տեսակ ոնեծանում ա, լենա-
նում, ուրախությունից լացս գալիս ա։ Ես վեց
տարվա մեջ վոչ մեկը մի գեղացու չոռ չի ա-
սել։ Վոչ մեկի մի ասեղ չի կորել։ Միրտս ցա-
վում ա, վոնց վոր խանչալով ծակեն։ Մտածում
եմ ու յերանի աւալիմ հիմիկվա ջահելներին, վոր
հսպես ազատ, արխալին ապրում են։

Ախ, վհնց չնախանձեն, շատ բան եմ տես-
նում։ Վորդիս, ջահելանալու ճար չկա, համա յե-
թե ես թագա կարդերը, ես թագա կարմիր զին-
վորները մի յերեսուն տարի առաջ դուրս գալին,
յես ենքան բախտավոր կլինելի։ Լուսաբերս դեռ
սաղ կլիներ, ջահել ջիվան կյանքս սեռվ չեր անց-

Նիւ Ե՞հ, ինչ անենք. չե՞ վոր ինձ նմանները
շատ են:

Վարդան ապոր ձախը կոկորդում խեղդվեց:
Մութը թանձրացել եր, խոր ձորելն ու
բարձրանիստ ժայռերը ծածկել: Միշան Վարդան
ապոր յերեսը չեր տեսնում, բայց նա այնքան
ցանկանում եր այդ: Ու յերբ նա ուզեց ինչ-վոր
հարցով խոսեցնել Վարդան ապորը, հանկարծ
տիսուր հնչեց ծերունի գլուղացու ձախը.

Ախ, շուտ անցար, ջահելություն.

Զան, մեկ ել յեկ, ջահելություն...

Նրանք հասել ելին գլուղաքաղաքին: Մի
շուն հաջելով մոտեցավ ուղևորներին ու սթա-
փեցրեց նրանց:

ՔՈՒՅՐԸ

Արմիկին

1

Գյուղաքաղաքը կրկին ընկել եր հականեղափոխականների ձեռքը:

Հրդեհի մատնված շենքերից բարձրացող ծխից գյուղաքաղաքի գլխավերև վարդակապուլտ մի հսկա հովանոց եր գոյացել ու հետզհետե ծավալվում եր, մեծանում:

Կանանց ու յերեխանների սուգ ու շիվանը, կրակի մեջ կենդանի խորովվող անասունների բառաչն ու մկկոցը մարդու ականջներ ելին խլացնում:

Մի որ առաջ, այրվող գյուղաքաղաքի կենտրոնում սեգ արծվի պես բազմած քարաշեն շենքի ճակատին վշտում եր Հեղափոխական Խորհրդի մուգ արնագույն դրոշը: Զմռան սառնաշումնչ որերը հեղափոխական հրդեհով վողողված հուլիսան որերի նման ջերմացնող ու այնքան հուսատու ելին:

Բայց թշնամին ուժեղ եր. հաղթեց ու քաղաքը հրդեհի տվավ...

Վառվող կարմիր գլուղաքաղաքի անկումի
պատմությունն ալսպես եր սկսվում։ Խմբապե-
տական իշխանությունը, նկատելով, վոր հաղ-
թական կարմիր բանակը մոռաենում եր Հայաս-
տանի սահմաններին ու, ձեռքը մեկնելով տրոր-
վող աշխատավորությանը, մահ ե բերում իրեն,
վերջին որերն ել ավելի կատաղեց։ Հակախմբա-
պետական տարրերի նկատմամբ գործադրվում
ելին բարբարոսական ձեի ճնշումներ։ Ամեն որ
միքանի հեղափոխականներ ելին գնդակահար-
վում, կամ վոչխարի նման մորթոտվում։

Կարմիր բանակը դեռ միքանի հարյուր վերստ
հեռու յեր։ Բայց սպասելն անհնարին եր։ Յեր-
կաթուղային կայարասին կից գլուղաքաղաքի
կոմմունիստական կուսակցության հնգյակը նկա-
տեց, վոր մի յերկու կամ յերեք որ ևս սպա-
սեն, բայց եկամ ընկերներից վոչ մեկը վողջ չկ
մնա։ Փակուղու մեջ ելին մնացել։ Ու բքաշունչ
ցուրտ մի յերեկո ապստամբության վորոշում
կայացվեց։

— Կովենք, մերոնք կհասնեն, կհաղթենք, —
համողված ասեցին հնգյակի անդամները։

Յերկաթուղային բանվորները, զյուղաքաղա-
քի չքավոր հողագործները և սովի մատնված
գաղթականները բայց եկների ղեկավարությամբ
ապստամբեցին ու մի ամբողջ որ ու գիշեր

կովելուց հետո խմբապետական իշխանությունը
տապալեցին։ Բայց հաղթողների դրությունը
դժվար եր։ Նրանք դրսից ոգնության հուս չու-
նելին, այնինչ պարտվողների համար հաջորդ
որն ահազին զորք ու ռազմամթերք լեկավ։
Գյուղաքաղաքի մոտակա լեռներում ապաստանած
խմբապետական բանակի թափթփուկներն ու
նրանց հետ փախած հարուստները, նոր ուժ
ստանալով, լեռներից իջան ու քաղաքն ողակե-
ցին։

Հեղափոխական կարմիր քաղաքը, լերկու որ
ու գիշեր դիմադրելուց, անհավասար կովին
չդիմացավ ու ընկավ։

Ու քրտնքի վոսկե կաթիլների գնով կա-
ռուցված աշխատավոր գյուղացիների տները
չար թշնամու հրալեզու կրակից այրվում, վո-
չընչանում ելին։

Հեղափոխական Խորհրդի անդամները մեծ
մասամբ ձերբակալվել ելին։ միայն միքանի հո-
գի կարողացան փախչել։

— Եդ կարմիր շներին վողջ-վողջ պետք ա
խորովեմ, — լերկար ընչացքի ծերը ձախ ձեռքով
վոլորելով, արծաթապատ դաշունի կոթը աջ
ձեռքով բռնած, գյուղաքաղաքի հրապարակում
լեղապատառ ամբոխի մեջ բղավում եր հակա-
հեղափոխական հրամանատար Խաչոն։

Խաչոն այրվող քաղաքում հանրածանոթ մի
ավազակ եր: Գյուղաքաղաքը քաջ գիտեր նրան.
Նա ինքն ել եր այդ քաղաքից:

— Հենց վաղն առավոտան... ոֆ, ինչ կմոր-
թոտեմ...

— Թող իրենց արնովներկվենու մուգ կար-
մըրեն, դրանք կարմիր գույնը շատ ես սի-
րում.—հրամանատարի աչքերին նայելով, ան-
հաճելի թեթևողիկ տոնով ասում եր սպալական
ուսադիրներով զարդարված, աղվամազը դեռ դեմ-
քին մի պատանի:

Ամբոխը դարհուրանքով քաշվում եր հրա-
պարակից:

Հետզհետե յերեկոյանում եր:

2

— Խաչո... արեիդ մեռնեմ... աղաչում եմ,
յեղբայրս... ազատիր... Խաչո ջան, խնդրում եմ,
հորս տան միակ սյունն ե, հորս ճրագը մի
հանգսնի... յեղբայրս... Գուրգենը...

Յերեկոյան, հականեղափոխական հրամա-
նատարը յերբ տուն յեկավ, կինը վոտքերը փա-
թաթվելով, աղաչեց, պաղատեց նրան, վոր Հե-
ղափոխական Խորհրդի նախագահ՝ բանտարկված
իր յեղբորն ազատի:

— Կարմիր շների փրկության մասին վոչ

մի խոսք:—Կնոջը վեր բարձրացնելով կծու պատասխանեց հրամանատարը:

Նա սև ոձի պես, չարքերով լի, սարսուռ տարածող աչքերը բևեռեց կնոջ աչերին ու ասաց.

— Կանգնիր, սիրելիս, կանգնիր մի պաշեմ, սիրտս այրվում ե:

— Խաչո, յեթե ինձ սիրում ես, խնդրում եմ, հանուն այդ սիրո... յեղբայրս... ազատիր... հորս տան միակ սլունն ե...

— Հա... հա... հա... յեղբայրդ... Հայկուշ ջան, խանումս, տիկնիկս, յես քեզ ինձանից շատ եմ սիրում, նամանավանդ, վոր գրկումս ես լինում... Բայց յեղբայրդ.—Վոչ մի դեպքում... նա վաղը պետք ե հայ ազգի պահապան Դաշնակցությանը մատադ գնա... Հա... հա... հա...

— Հեռացիր, մարդակեր, անխիղճ. — ամուսնու գրկից դուրս փախչելով, նվաց կինը, աչքերը զարհուրանքից լայն բաց արած, ձեռները դողալով:

— Հայկուշ... եղ դժւ... յես մարդակե՞ր... վոչ մի դեպքում, մեր պապերի սուրբ ավանդություններն ուրացողներին կրանք չեմ տա, յես նախնիքներիս հարազատ թոռն եմ, — Խաչոն գոռողաբար ասաց ու մոտենալով յերկաթալար յերկար բազուկներով գրկեց կնոջ իրանը: Կինն

ուշաթափ գրության մեջ եր, վոր Խաչոլի շուրթերը հասան նրա կապտած շուրթերին...

3

Գիշեր խավարամած սենյակում ահարկու յեր, զարգանդ:

Հաղթական հականեղափոխական հրամանատարը քնի մեջ յերբեմն զառանցում եր, հրամաններ արձակում, կարմիրներին հայնոյում։ Հրամանատարի կինը, կողքին արթուն, անծըլպտուն պառկած, ականջ եր դնում նրա զառանցանքներին ու տանջվում։

-- Յեղբայրս պետք ա վաղը գնդակահարվի, — մտածում եր Հայկուշը, — և ում հրամանով նրա, վոր յերեք տարի յե արյունս ծծում ե, նրա, վոր կողքիս պառկած անուշ քնած ե և միքանի ժամից հետո պետք ե արթնանա ու սկսի տանջել ինձ իր վայրենի կրքերի բավարարման համար...

Ու սենյակի գիշերալին լոռությունը խանգարվեց Հայկուշի հեկեկոցով։

Հայկուշը հեկեկում եր ու վերհիշում այն սև որերը, յերբ հանդիպեց ու կապվեց հանրածանոթ ավագակասկետ Խաչոլի հետ։ Տասնեռութտարեկան, վարդագույն թշերով, սև ու կրակոտաչերով, աչերը գրկող ունքերը ծիծեռնակի թեփերի պես թուխ ու սրածայր, սև փարթամհյու-

սերը մեջքովը կախված, շիմշատ բոյով մի աղջիկ
եր նա, յերբ 17 թվի փետրվարյան հեղափո-
խությունից հետո մի որ յերկաթուղալին կայա-
րանում Խաչովին հանդիպեց ու խելքահան արավ
նրան:

Խաչոն Հայկուշի ձեռը խնդրեց, նրա յեղ-
բայրը՝ մեքենավար բայլշեկիկ Գուրգենը չհամա-
ձայնվեց:

-- Դաշնակցական ավազակին յես քուլը չեմ
տա, —կտրուկ պատասխանեց նա:

Սակայն Հայկուշը հասած աղջիկ, արյունի
յեռման շրջանում առաջին հանդիպումով տար-
վեց Խաչովի արծաթլա դաշունի փայլից, յեղ-
բորից թագուն համաձայնություն տվեց:

Գաղտնիքը բացվելուց հետո Գուրգենը քըռ-
ջը չնախատեց...

Հայկուշը խմբապետ ամուսնու կողքին պառ-
կած՝ հիշեց վեց որ առաջ գյուղաքաղաքում տե-
ղի ունեցած առաջին կռիվը, յեղբոր ղեկավա-
րությամբ ապստամբած բայլշեկիկների հաղթա-
նակը, Հեղափոխական Խորհուրդը, Գուրգենի
ճառերը, հասարակական յերթերը... Հայկուշը հի-
շում եր ու մղկառւմ:

Թարմ պատկերները նրա աչքերի առաջից
անհետացան, մեկ ել պատկերացավ մի ուրիշ
շրջան: Ահա յերկաթուղալին ոլաքավոր ծեր հայ-

ըր, Թիֆլիսից նոր ե յեկել: Կինը բողոքում ե, թե՝ տասը հաց չկա, ձմեռ ե գալիս, յերեխաներին տաք շոր ե հարկավոր, ձմռան համար ցախ ու հաց պետք ե գնել: Իսկ ամուսինը հանդարտությամբ փոքրիկ Հայկանուշին գոզն ե քաշում ու մազերը սղալելով՝ պատասխանում.

— Կնիկ, հերիք ա, նեղ որին լեն որ ել կլինի, դարդ մի անի, շատ չի անցնիլ, բանվոր մարդիկ կմիանան ու հարուստների ձեռքից ամեն ինչ կխլեն, աղքատությունը կվերացվի, են ժամանակ ամեն բան վախտին կունենանք:

Հայկուշը դողում եր: Վորքան ազգու և սարսափելի յե անցյալի դառնությունները մտաբերելը:

— Վայ, քոռանամ յես, վերջապես հասել ե այն որը, վոր հորս մուրազը յեղբայրս ուզում ե կատարել, իսկ յես նրա թշնամու... Ո՞խ, հայրս... հայրս... յեղբայրս... մեռնել:

Հայկուշը տեղաշորից դուրս յեկսով:

Գիշերվա կեսը կլիներ: Պահակը հրացանը ուսին շրջում եր գլուղաքաղաքի դպրոցի առաջ ու մըսելուց վոտքերը գետնին զարկում:

Պահակը նկատեց, վոր մեկը մոտենում եր իրեն: Հեղափոխական Խորհրդի անդամները դպրոցում բանտարկված ելին: Նրա սիրտը դոդում եր. ամեն ըոպե սպասում եր, վոր ահա

բալլշեկիկները կհարձակվեն գերիներին փրկելու։
Պահակը յեկողին շուտ ճանաչեց։ Նա յեր՝ հրա-
մանատարը։ Ի՞նչպես կարելի յե նրան հանդի-
մանել, թե՝ պոստին մի մոտենա, խմբապետ
Խաչոն վրատեղից ե նման կարգերի յենթարկ-
վում։ Հում-հում կուտի։

Հրամանատարը պահակին բարեկեց ու ան-
ցավ դեպի կալանավորների սենյակը։

Զարմանալի իրողութիւնն... պահակն իր
աչքերին չեր հավատում։

Հրամանատարը կալանավորներին արձակեց։
Նրանք գնացին, այլևս չկան։

Պահակը շշմել եր. ուզում եր բղավել, ձենը
դուրս չեր գալիս։

Հրամանատարը ձեռքը կողքին կանթած
կանգնել եր դպրոցի պատշգամբում ու չեր շարժ-
վում։

Հենց այդ վալրկանին հրամանատարի տան
կողմից մեկը՝ մերկ, միայն հալավ ու վոտաշորը
հագին, յերեաց ու դեպի դպրոցը վազելով, ձեն
եր տալիս։

— Պահանակ... մի-ի թողնիր, մոտեցողին
կրակիր...։

Պահակն իրեն կորցրեց։ Իսկական Խաչոյի
ձայնն եր։

Պատշգամքում կանդնածը փորձեց փախչել,
բայց մերկ մոտեցողն առաջը կտրեց:
Նրանք յերես-յերեսի կանգ առան:
— Հայկուշ... Սատանա...
— Խաչո... Ավաղակ...

Նրանց ատրճանակները թնդացին. Հայկուշը գետին գլորվեց. Խաչոն կուրծքը բռնեց, մոընչալով թեքվեց իրեն հասած զինվորի ուսին:

Կրակոցի ու հարալիրոցի ձենից դաշնակցական զորքն արթնացավ ու քնաթաթախ անիմաստ սկսեց այս ու այն կողմը կրակել:

Աղմուկի ալդ վայրկանին գլուղաքաղաքի գլխին հանկարծ գնդացիրային գնդակի կարկուտ տեղաց: Քաղաքի պատերի տակ հասած կարմիր վաշտերը, վոր սպասում ելին լուսաբացին, անժամանակ քաղաքում բարձրացած խուճապի հետևանքով ստիպված յեղան գիշերը գործել...

ՆԱՄԵԴԱԴՐՎՈՒՄ ԵՐ № 172 ՀՈԴՎԱԾՈՎ.

1.

Արեի հրաշեկ ճառագալթները մոծակի պես
խայթում ելին, Շոդ եր, ծանր տոթ, շնչել չեր
լինում: Յերկաթուղու կայարանը՝ վոնց վոր ան-
մարդաբնակ, վոչ մի շշուկ: Ապրանքատար յեր-
կու վագոն բաց դռներով կանգնած ելին կա-
յարանի մի ծայրում: Մի շուն մտել եր
վագոնի հովը ու լեզուն յերկար հանած, փըր-
փուրը բերանին՝ հևում եր: Կայարանից քիչ
հեռու՝ նորակառուց Լուկաշեն կոմմունակի մո-
տերքը, մերթ ընդ մերթ տրակտորն եր փըն-
չացնում, բարձրաձայն փրփրթում:

Շունը վագոնի տակ հևում եր, շոդահար
կաղկանձում:

Կայարանին դրկից կառուղվող բամբակա-
զտիչ գործարանի բակից դուրս յեկավ մի կա-
ռուցող բանվոր ու քայլում եր դեպի յերկաթ-
գիծը: Միջակից ցածր հասակով, առուց կազմը-
վածքով մի յերիտասարդ եր նա: Բայց ինչու
յեր մտազբաղ, հաստ ունքերը խոժոռած, մթնա-
դեմ: Գլխից յերկում ե, վոր պարսիկ ե. ճակա-

տից դեպի ծոծրակն ուղղահայաց իջնող մի ակոս եր նկատվում։ Նա գլխաբաց եր, փափախը թևի տակ դրած և գլխի այդ ակոսն ու ճակատը քրտնակոլով՝ շողշողում և պսպղում ելին։

— Աբդուլ, վաղը յերեկոյան անպատճառ կվերադառնաս,—գնացող բանվորի յետեկց ձայն տվեց մի ուրիշ բանվոր։

— Լավ,—կտրուկ ու գլխակոր պատասխանեց Աբդուլը։

Մոծակներն ոդի մեջ վխտում ելին։ Մի մոծակ կայծակի արագությամբ հարձակվեց Աբդուլի քթի վրա և յերեխի խայթեց։ Աբդուլը շատ մեղմ, ձեռքի մի շարժումով վոնդեց նրան։

Զարմանալի մարդ է, գոնե գլուխը ծածկեր։ Կարծես թե բարկ արել նրան չի ազդում։ Աբդուլի դարչնագույն արևելյան աչքերում խանդի և հուզմունքի կայծեր ելին բոցկլտում։

Կայարանի գրասենյակից դուրս յեկավ մոխրագույն քաթանե շորերով մի մարդ, միքանի անգամ զանգը քաշեց և ուզում եր կրկին ներս մտնել, բայց վառ արեխ տակ այրվող Աբդուլին նկատեց և կանգ առավ։

— Ուր, Աբդուլ, ուր, ինչու յես արեխ տակ այրվում։

— Սաղ ըլնես, վոչինչ, չեմ այրվի. գնացքին եմ սպասում, պիտի գնամ Յերևան։

— Ինչու ալդքան շուտ, մի շաբաթ չկա,
վոր լեկար:

— Ցես ել չգիտեմ, գնում եմ, սիրտս ու-
զում ե, --դժվարությամբ պատասխանեց Արդուլն
ու լռեց:

Մոխրագույն շորերով մարդը միքանի վայր-
կլան մտածեց ու մեկ ել ծիծաղելով ձայն տվեց.

— Հը, սիրտդ ուզում ե հա. հասկացա,
բարի ճամպա. նոր ամուսնացած մարդ ես, գի-
տեմ, հիմա հարսիդ աչքը ճամպին ե:

Զանդ քաշողն ասաց ու մտավ գրասենյակ:
«Հարսիդ աչքը հիմի ճամպի լե» բառերը
ժանգոտ մեխի պես ցցվեցին Արդուլի գլխում:
Արդուլը շնչել չեր կարողանում. նրա սիրտը կա-
տաղի թափով զարկում եր:

— Զեել. նաաբա... չեե... նաա... ինձ դա-
վաճ.... չե... կսպանեմ...

Արդուլը խոպոտ ձայնով զառանցում եր:
Ու նա, ինքն ել չիմանալով թե ինչու, մտամո-
լոր մոտեցավ կայարանի ծայրում կանգնած վա-
գոններից մեկին, մտավ վագոնների տակը, շան-
կողքին՝ ստվերում պառկեց:

Ու մեղմ թեթև քամին սլվալեն շուեց Ար-
դուլի լերեսը. Քամին համբուրեց Արդուլի քըրտ-
նաթոր դեմքը, շուրթերը... Քամու քնքշագին
համբուրը Արդուլին ցնցեց: Նա հիշեց իր նըռ-

Նաշուրթ Զեյնարի համբուկը: Ո, չե, աշխարհի
մեջ վոչինչ չի հասնի Զեյնարի սիրո համբուլ-
րին: Նա ջահել ե, 15-ը դեռ չլրացած, սիրուն,
անուշ, զգայուն: Աբդուլին թվաց, թե սև չարսա-
վի տակ ծածկված, կիսաբաց աչքերով, Զեյնա-
րը մոտեցավ ու նըրամաշկ, նոնագույն շուրթե-
րը հպեց իր շուրթերին: Նա դողալով ձեռքերը
պարզեց և ուզում եր Զեյնարին. գրկել ..

Շոգահար պառկած շունը թուլակամ մի
«հափ» արավ, կլանչեց ու հեռացավ, վոր տա-
րորինակ մարդը այլևս իր գլուխը չբռնի:

2.

Մութն եր. արել վաղուց եր մայր մտել:
Կայարանը յեռուն եր, բանուկ: Մոտակա դաշտե-
րից գլուղ մեկնող սայլերը ճռնչում ելին խուր-
ձերի բեռան տակ: Գեղջկական անուշ յերգի
ձախնը լողում եր արծաթաշիթ լուսնի լուսավոր
ալիքներում ու գնում հեռուները...

Կայարանում բարձրացավնոր ժամանած ապ-
րանքատար գնացքի սուլոցը: Աբդուկը սուլոցի
ձախնից ուշքի յեկավ. Նա շփոթված նաևեց շուրջն
ու մի պահ մտածեց: Յերեկվա գնացքը յեկել եր և
անցկացել, իսկ ինըը չեր իմացել: Դիվահարի
նման անզգա վազեց կայարան ու բարձրացավ
մի վագոն:

Շոգեկառքը փնչաց ու շարժվեց։
Լուսինը սիրուն շողեր եր և աղում Արա-
րատյան դաշտում ու գեղեցկացնում նրա լե-
ռեկոն։

3.

Մի կառք Ամիրյան փողոցով սլանում եր
դեպի Սունդուկյան փողոց։ Արդուլը մենակ կառ-
քի մեջ նստած դիտում եր իր շըջապատն ու
մտածում։ Բոլորից շատ նրան զարմացնում եր
նորակառուց ելեկտրակայանի վոսկեֆրվուր ա-
ռատահոս լուսը։

Արդուլը նկատում ե, թե ինչպես վոսկե-
ֆրվուր լուսի տակ, մինչև ուսերը բաց թե-
վերով, կանայք՝ տղամարդկանց կուռը մտած,
հոհուալով գնում ելին զրունելու... «Ուր են գնում,
մտածում եր Արդուլը։ Հա, սրանց մեծ մասը
դավաճանսեր են. այ, գաղտագողի լեն գնում,
ով գիտե, գուցե Զեյնարն ել հիմի մի ուրիշի
հետ ե գլուխ-գլխի տված սիրաբանում»։

«Զե, կսպանեմ», — մտքի մեջ խոսում եր Ար-
դուլը։

Կառքը կանգ առավ Սունդուկյան փողոցի
և... տան առաջ։

Արդուլը լուռ և անշշուկ մտավ բակը։
Բակը խաղաղ եր։ Արդուլի սիրտը թրթում

եր, Նա կարծում եր, թե Զեյնաբին գտնելու յե
մի ոտար տղամարդու հետ ու պատրաստվում եր
արյուն թափելու։ Նա մոտեցավ Զեյնաբի մոր
սենյակին ու լուսամուտից ներս նայեց։ Վոչվոք
չկար։ Արդուլը դողաց։ Վորքան նա այս ու այն
կողմն ընկավ, աներոջ տնեցիներից վոչ մեկին
չգտավ։

— Շան աղջիկ, սիրեկան ե ճարել... մեծ
պատառն ականջը կթողնեմ, թիքա-թիքա կկո-
տորեմ,—մտածեց խանդից կուրացած Արդուլն
ու մոտեցավ քակի մեջ բազմած թթենուն։ Ահա
թթենու տակ մի անկողին։ Արդուլը վերմակը
ճանաչեց. նրանցն ե։ Ոիրտը միքիչ հանգստա-
ցավ։ Մոտեցավ անկողնին։ Պառավը, Զեյնաբի
մայրը ծանոթ անկողնում մուշ-մուշ քնած եր
մենակ։

— Քավթառ, աղջկան բաց ե Թողել անբա-
րոյականության ու մենակ, ազատ մրափել,—ա-
տամները կրճտացնելով, լսելի ձայնով ասաց Ար-
դուլն ու պառավին հրեց։

Պառավը քնաթաթախ վեր ցատկեց։

— Քավթառ, մոր ե աղջիկդ, շուն։

— Ախ, Արդուլ, քոռանամ յես, յեկել ես,
նստիր, ջանս։ — Զեյնաբը... Բագվի կոմսոմոլ յեղ-
բայրդ յեկել եր, գնացին ման գալու, հիմա կը-
գան... նստ ..

Պառավիլի խոսքերը կացնով հարվածեցին Աբդուլի գլխին։ Նրա յերևակայության մեջ նույն վայրկյանին պատկերացավ իրեն մեծ յեղայրը՝ Զեյնաբը գրկում։

— ... Յեղբայր... Իին... դավաճան... — մոնչաց Աբդուլին ու հարձակվեց պառավո վրա։

Տրորվող պառավի ճիշը փողոց հասավ։ Միլիցիոները վրա հասավ ու Աբդուլին առաջարկեց քաղաքամաս գնալ։

4.

Աբդուլի գլխովն անցած պատահմունքից անցել եր յերեք շաբաթ։ Ամուան առավոտ եր, սիրուն ու հովանուշ առավոտ։ Թաղամասի ժողղատարանի դահլիճը խլխում եր։ Մեղաղրական աթոռի վրա նստած եր տխուր, մտամոլոր, շառագունած դեմքով Աբդուլը։ Նա քաշվում եր գլուխը բարձրացնել ու միշտ վար եր նայում։ Մեղաղրէալից քիչ հեռու՝ դեպի ձախ, նստած եր դեռահաս մի աղջիկ՝ չարսավի մեջ փաթաթված։ Նրա դեմքը չեր յերեռում սև չարսավի տակից։ Յերբեմն նա չարսավը շրջում եր ու կիսով չափ բաց անում իր թուխ այտերը, կրակով լի աչերը։ Աբդուլն աչքի տակով նայում եր նրա կողմը ու խորը ախ քաշում։

Մանկահասակ կնոջ մոտ նստած եր արորված պառավը։

Նիստը բացվեց։ Դատախաղը կարդաց մեղադրական արձանագրությունը։ Արդուլ Հասան ողլին՝ 30 տարեկան, պարսկահպատակ, անկուսակցական, զբաղմունքով վորմնադիր, անգրադետ, մեղադրվում ե Քրելական Որենսգրքի 172 հոդվածով։

Խոսք տրվեց տուժողին՝ ծեծված պառավին։

— Ի՞նչ անեմ, ջանել ե, սխալվել ե, ներում եմ, տունս պահողը Արդուլն ե, աղտտեցեք, կցկտուր ասաց պառավն ու գլուխը կախեց։

Պառավից հետո խոսք տրվեց Զելնարին։ Նա լերեսը կիսաբաց՝ մի քայլ առաջ արեց ու համարձակությամբ խոսեց։

— Մորս ասածին համաձայն չեմ, յես ուզում եմ... յես ուզում եմ, վոր խրատ .. իրեն կոմսումոլ լեղբայրը Բագու գնալիս ինձ ասաց, թե՝ Զելնար, դարդ չանես, Արդուլը թող գնա մի քանի ամիս ուղղիչ տանն ուղղվի։ Նա կնոջն այնպես ե նայում, կարծես թե դեռ իրանում ե ապրում։

Միքանի տասնյակ աչքեր՝ միքանիսը բարկացկոտ, մլումները համակրանքի ժպտով ուղղվեցին Զելնարի հուրհրան աչքերին։

Մակը ջղայնացած՝ աղջկա փեշը քաշեց ու փսփսաց։

— Շելթանի քած. . հազրաթ Աբասը վկա...
շան ըռեխը կտամ...

Վկաներ չկային:

Դատավորը հարցրեց Աբդուլին, թե նա մեղավոր ե համարում իրեն:

Աբդուլի մռալ դեմքը կարմրատակեց:

— Յես մեղավոր... չե... մեղավոր... Փելդամբար... Ալի... չե...

— Իսկ զոքանչիդ ծեծելը հանցանք չե:

— Ի՞նչ, հանցանք չե, մեզ համար սովորական ե այդ, տղամարդն իրավունք չունի՝ կնոջը կամ մորը ծեծելու...

— Խորհրդակին յերկրում ովուգում ե լինի, ծեծը խստիվ արգելվում ե. — պնդեց ժողատենակալը:

— Դե ել վոր որվա կինս ե, վոր իրեն վատ պահած դեպքում չծեծեմ.. Մոլլան ել ե կնոջ կողերը ջարդում, յեթե նա անհավատարմություն ե ..

— Քաղաքացի Աբդուլ, դուք դեկավարվում եք խորհրդակին որենքներով, վոչ թե մոլլաների դադանալին սովորություններով:

— Մոլլան ել կալատժվի, — մտածկոտ, մատերը ճմռելով, ասաց դատավորն ու նաևց ժողատենակալիներին. — գնանք:

Աբդուլը ցնցվեց. նրան թվաց թե հենց այդ

բոպելին իրեն գնդակահարռւմ են։ Սպրդնած,
աչքերը լայն բաց արեց ու ձեռքերն առաջ
ոլարդեց։

— Ընկեր դատավոր, խնդրում եմ...սխալ-
վել եմ... այդ բոլորն ինձ հասկացնող չի յեղել,
յերկու, յերկու տարի յե, վոր... վոր իրանից յե-
կել եմ .. ել չեմ... չեմ... փերդամբար... Այ...
հասրաթ իսս'ա, ել չեմ թակի։

Ահեղ մի սարսուռ անցավ Զեյնաբի մարմ-
սով։

Դատական կազմն առանձնացավ, հինգ բո-
պելից հետո յետ դարձավ։ Դահլիճում նստողնե-
րը գլխարկները վար առնելով վոտքի կանդնե-
ցին։ Մանր լռությունն ու դատավորի դեմքի
սառած արտահայտությունը ճնշում տարածեց
դահլիճում։

Դատավորը վարժ ու յերդի չափ ներդաշ-
նակ սահուն, դատավճորի ձեւական նախարանը
կարդալուց հետո, ձայնը բարձրացնելով, բառերի
տակ ընդգծելով շարունակեց։

— Քաղաքացի Աբդուլ Հասան ողլին, իր
զոքանչին ու կնոջը ծեծելու համար, համաձայն
Քրեյական Որենսգրքի 172 հոդվածի, յենթարկ-
վում ե 6 ամիս կալանքի։ Սակայն, ինկատի ու-
նենալով Աբդուլի անգրագիտությունը, սոցիա-
լական դրությունը և այն, վոր զղջում ե իր


սխալը, դատարանը նրա պատիժը կիսով չափ մեղմացնում եւ Աբգուլը յերեք ամիս պետք ենստի ուղղիչ տանը։

Հանդիսականները նայում են Զեյնարին։

— Խանդոտություն ներշնչողը նա յեւ.—առում ե մեկը։


Աբգուլը մոտենում եւ առաջ գրկում պառավի գլուխը, ապա Զեյնարի ձեռքը բւնում ու կամաց շնչում։

— Զեյնար ջան, վոր դուքս գտմ, եւ չեմ կասկածի... թակի...



ՑԱՆԿ


	<i>bջ</i>
1. Զղջում	5
2. Տոկար Վոսկան Վահանովը	28
3. Խնճուռն լերկու ամիս	35
4. Յեղիկը	43
5. Մեքենագետի վորդին	54
6. Սահմանագլխին	85
7. Քուկը	97
8. Նա մեղադրվում եր № 172 հողվածով	107



ՎՐԻՊԱԿ

Շարլած ե
63 հջ. 7 առղ կջղահարվի

Պիտի լինի
կխղճահարվի



H. H. Munro



22

[354]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045878

A
8630